

ԵՐԵՎԱՆԻ ՄԻՔԻՄԱՐ ԳԵՂԱՅԻՆ ԱՆՎԻԼ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՆՈՐԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՊՐԱՓԱ ԲԺԻՇԿ

2012 ԹՎԱԿԱՆ N 6-7 (1263-64) Ապրիլ





Ապրիլի 1 Կատակի օր

- Ծիծաղն արև է, նա վտարում է ձմեռը մարդու դեմքից:
- Երբեք մի դադարի ժպտալ, նույնիսկ երբ դու տխուր ես, չէ՞ որ ինչ-որ մեկը կարող է սիրահարվել ժպտիդ:



Կիսամյակային քննությունից կտրված ուսանողը փողոցում կանգնած լաց է լինում: Այդ պահին մոտով անցնող գնդապետը հարցնում է.

- Տղա ջան, ի՞նչ է պատահել:
- Քննությունից եմ կտրվել:
- Հետո՞ ինչ կտրվել ես, բա զինվորը լացի կլինի՞...

Ուսանողուհին մտնում է լսարան՝ գրականության քննություն հանձնելու:

- Անուն, ազգանուն, - հարցնում է դասախոսը:
- Եթե չհանձնեմ՝ Աճնա Կարենիմա:

Ապրիլի 8 Ձատիկ

- Քրիստոս հարեալ ի մեռելոց:
- Օրհնեալ է Հարությունը Քրիստոսի:



Ապրիլի 7 Մայրության և գեղեցկության օր

Մորս սրտի հետ աշխարհն եմ չափել,
էլի մեծ էր նա, մեծ էր ու անգին,
Արև աչքերի լույսն է նա թափել,
Լուսնյակ դառնալով որդոց օրոցքին...
Եվ հիմա քիչ է, թե աչքերս տամ,
Թե սիրտս հանեն ու տամ մայրիկիս,
Ախ, մայր երգելուց ինչպե՞ս կշտանամ,
Մայրս պատկերն է մայր հայրենիքիս:

Հ. ՇԻՐԱԶ



Առյուծ ծնող մայրեր
Նկարում Տիրուհի
Գյուլնազարյանն է՝
Գարեգին Նժդեհի ծնած,
մեծացրած և ազգին
նվիրած մայրը:

Ապրիլի 7 Առողջության համաշխարհային օր

1948-ից ԱՀԿ-ի կողմից ընդունված է ամեն տարի ապրիլի 7-ը նշել որպես առողջության համաշխարհային օր: Ամեն տարի, առողջության համաշխարհային օրվան նվիրված ընտրվում է թեմա, որը վերաբերում է ԱՀԿ-ի որևէ առաջնահերթ ուղղվածությանը:



Առողջության համաշխարհային օրը հանընդհանուր քարոզարշավ է, որը հանրության ուշադրությունը հրավիրում է առողջապահական համընդհանուր նշանակությամբ որևէ խնդրի:

2012 թվականի առողջության համաշխարհային օրվա թեման է՝ «Ծերացումը և առողջությունը», օրվա կարգախոսը՝ «Քաջ առողջությունն ավելացնում է կյանքի տարիները»:

ԱՄՍԱԳԱ ԲԺԻՇԿ

Գլխավոր խմբագիր
ՍԵՂԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ
ԹՈՐՈՍՅԱՆ

Editor
Seda KH. TOROSYAN
Համակարգչային
ծևավորումը
ՀԱՍՄԻԿ ԱՔԵԼՅԱՆԻ
Թղթակից
ԼԻԼԻԹ ՎԱՐՊԱՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացող Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան պետական ոչ առևտրային կազմակերպություն Թերթը գրանցված է ՀՀ արդարադատության նախարարությունում: Գրանցման վկայական N 299: Տպագրվում է «ԼԵԳԱԼ ՊԼՅՈՒՄ» ՍՊԸ իրատարակչությունում Հեռախոս 56-21-91, 2-43, E-mail: apagabzhishk@ysmu.am Տպաքանակը 500 օրինակ: Անվճար



Ապրիլի 18

Չուշարձանների և տեսարժան վայրերի պահպանության միջազգային օր

1983-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ պատմական հուշարձանների ու տեսարժան վայրերի պահպանման հարցերով միջազգային խորհրդի գազաթափողովը ապրիլի 18-ը հաստատեց որպես պատմական հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման օր: Ողջ աշխարհում, իսկ Եվրոպայում առավել ևս, սեփական պատմության ու պատմական ժառանգության հետ շատ խնամքով ու ակնածանքով են վերաբերվում: Մենք ևս այս առնչությամբ մեր մասին մեծ կարծիք ունենք: Սակայն ...

Վերջերս Արագածոտնի մարզի Արտաշավան գյուղի տարածքում տեղադրված հայոց այբուբենի քարե տառերի պուրակում ակնառու են եղա սահմնեցուցիչ տեսարանի՝ Ս տառի վրա գրված էր «Սոֆի ու Սոնա», Վ-ի վրա՝ «Վարդուհի», Գ-ի վրա՝ «Ջակոբ Ավագյան», Թ-ի վրա՝ «Թելման», Գ-ի վրա՝ «Գուրգեն, Գարիկ», Մ-ի վրա՝ «Մարի», Ծ-ի վրա՝ «Շողիկ», Զ-ի վրա՝ «Զուլի, Զեյս»: Իսկ Անանիա Շիրակացու արձանի վրա գծագրված էր սիրո դարձ ապրած բանաձևը՝ **Ծ+Ա=Սեր...**



Իրենց անարժան անունը այսպես վայրենաբար «հավերժացնողներին» ցանկանում են հղում անել՝ մեր հուշարձանները քիչ են ապականել թուրքը, արաբն ու մոնղոլը, թաթարն ու պարսիկը: Ձեր կնդակների հետքերը մեր սրբավայրերում և հուշարձանների վրա գալիս են վկայելու, որ ձեր ապուսպապերի, ավելի շուտ՝ ապուստատերի արյան մեջ վերը քվարկվածները հետքեր են թողել...

Այլապես ի՞նչ բացատրություն տալ հուշարձաններին, եկեղեցու պատերին բարբարոս վայրենությամբ մակագրություններ անողների արարքին...

Ս.Թ.

Ապրիլի 23

Գրքի և հեղինակային իրավունքի միջազգային օր



Ապրիլի 23-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությամբ ամբողջ աշխարհում նշվում է Գրքի և հեղինակային իրավունքի միջազգային օր, որը նշվում է աշխարհի ավելի քան 100 երկրներում, այդ թվում՝ Հայաստանում:

2012 թվականին Հայաստանի 12-րդ մայրաքաղաքը՝ Երևանը, հայտարարվեց գրքի համաշխարհային 12-րդ մայրաքաղաք: Պատվախնդրությամբ գնանք դեպ այդ տունը:

Ապրիլ 22

Երկիր մոլորակի համաշխարհային օր

Երկրի օրվա պատմությունը սկիզբ է առնում 1840 թվականից, երբ Ջ. Սթերլինգ Մորթոնը իր ընտանիքով տեղափոխվեց Նեբրասկա նահանգի տարածք: Միայնակ ծառերով անծայրածիր պրերիաները, քամին և արևը, որոնցից հնարավոր չէր թաքնվել, չորացած հողը Մորթոնին հանգեցրին կանաչապատման մտքին:



Նա առաջարկեց կանաչապատմանը նվիրված օր սահմանել և մրցանակներ հանձնել ամենաշատ ծառ տնկած մարդկանց: 1882-ից ապրիլի 22-ը հայտարարվեց կանաչապատման պաշտոնական տոն:


1970 թվականին ապրիլի 22-ը հայտարարվեց Երկիր մոլորակի համաշխարհային օր:

Երկրի օրվա միջոցառումներին վերջերս ավելացել է մի նորույթ. Աշխարհի շատ երկրներ ապրիլի 1-ին, ժամը 20³⁰-21³⁰ անջատում են լույսերը...

Այս մասին՝ 33-րդ էջում:

Ապրիլի 24

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր



ՀՀ նախագահին այցելեց ԵՊԲՀ-ի նորարարաց վիրաբուժական մասնաշենք



ջատարներից մեկն է: Համալսարանը եզակի է նաև այն առումով, որ խոշոր դերակատարում ունի առողջապահական շուկայում՝ իր լավ մասնագետների և վերազինվող հիվանդանոցների շնորհիվ: Վստահ եմ՝ այսօր բացվող նոր ենթակառուցվածքները կծառայեն և ուսանողների ու երիտասարդ մասնագետների մասնագիտական կարողությունների հետագա ծավալմանը, և լուրջ դերակատարություն կունենան մեր ազգաբնակչության առողջության պահպանման գործում»:

ԵՊԲՀ-ի ռեկտոր **Դերենիկ Դումանյանը** ներկայացրեց նախկինում ոչ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան այցելեց Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը: Նա շրջեց «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրում գործարկված վիրաբուժական նոր մասնաշենքում, ծանոթացավ կատարված աշխատանքներին և մատուցվող ծառայությունների որակին: ԵՊԲՀ-ի ռեկտոր, պրոֆեսոր Դերենիկ Դումանյանը նախագահին ներկայացրեց հիմնանորոգված կլինիկաները, ինչպես նաև ստեղծված բոլոր այն հնարավորությունները, որոնք կնպաստեն բուժման ժամանակակից մեթոդներին ուսանողներին հաղորդակից դարձնելուն:

Համալիրի նախկին մանկական մասնաշենքում տեղակայվել են վիրահատական ուղղվածություն ունեցող ընդհանուր վիրաբուժության, քիթ-կրկորդ-ականջաբանության, փոքր ինվազիվ անոթային վիրաբուժության, դիմածոնոտային վիրաբուժության կլինիկաները, ինչպես նաև նոր կազմավորված ուրոլոգիայի կլինիկաներն ու ութ նոր վիրահատարանները, որոնք բոլորն էլ նախկինում անբարեկարգ վիճակում էին գտնվում:

Լրագրողների հետ զրույցում ՀՀ կրթության և գիտության նախարար, ԵՊԲՀ-ի նախկին շրջանավարտ **Արմեն Աշոտյանը**, կարևորելով իրականացված աշխատանքներն, ասաց. «Այս ամենն ապացույցն է այն ճշմարտության, որ Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության համակարգը զարգանում է: Մեր բուհերը կարողանում են ներդրումներ կատարել՝ ուսանողների մասնագիտական հմտությունների ձեռքբերման համար անհրաժեշտ բազա ապահովելու նպատակով: Բժշկականն այս ոլորտում առա-

բարվոր վիճակում գտնվող կլինիկաների համար ստեղծված լավագույն պայմանները:

«Նոր բացված կենտրոնում միաժամանակ ութ վիրահատություն կարող է իրականացվել: Այս բաժանմունքի հարևանությամբ գտնվող մեյրոսվիրաբուժության կլինիկայում ևս երկու վիրահատարան ունենք: Եթե դրանց գումարեք մյուս մասնաշենքում գտնվող միկրովիրաբուժության վիրահատարանը, ապա կարելի է ասել՝ այս համալիրում վիրահատարանների խնդիր չունենք:

Սրանք սովորական վիրահատարաններ չեն, այլ առավելապես հարմարեցված են ուսանողներին գիտելիք տալու համար: Տեսախցիկները տեղադրված են վիրահատարանի լամպերին, որոնց լույսն ընկնում է ուղիղ վիրահատական դաշտի վրա: Ուսանողները մոնիտորների վրա կտեսնեն վիրաբույժի կողմից կատարվող բոլոր գործողությունները:

Վիրահատության ընթացքին կհետևեն նաև բժիշկների սենյակում: Իսկ վիրահատությունների համար պատասխանատու ավագ բժիշկն ուսանողների հետ հետևալով վիրահատությանը, կբացատրի ընթացքը: Բոլոր վիրահատությունները, որպես ուսումնական մյուս, կծայնագրվեն: Ուսանողները դրանք կդիտեն այդ նոգոլոգիաների տեսական ուսուցման ընթացքում: Շարունակելու ենք կլինիկաների վերակառուցումը և վերազինումը: Մեր նպատակն է համալսարանական բոլոր կլինիկաները համապատասխանեցնել միջազգային չափանիշներին: Մեզ մոտ նաև այլ կլինիկաների բժիշկներն են վերապատրաստվում: Ուրեմն վստահություն ներշնչելու համար պարտավոր ենք լավագույն պայմաններն ապահովել:

Մենք լուրջ քայլեր ենք կատարում գլխուղեղի անոթ-

ների ստեղծվող ման ուղղորտում խորանալու և տարածաշրջանում առաջատարի դիրքը պահպանելու ուղղությամբ:

Պրոֆեսոր Ռուբեն Ֆանարջյանի ղեկավարած ընդհանուր և էնդովասկուլյար նյարդավիրաբուժության կլինիկայում գլխուղեղի անոթային համակարգի հիվանդությունների արդյունավետ բուժումն իրականացվում է նորագույն մեթոդներով և եղանակներով, մասնավորապես՝ ներանոթային վիրահատություններով:

Փոքր ինվազիվ անոթային վիրաբուժության կլինիկայի երիտասարդ ղեկավար, բժշկական գիտությունների դոկտոր Ռաֆայել Մանվելյանը դեռ նախկին՝ չափազանց սուղ պայմաններում, կարողացավ էնդովասկուլյար եղանակով վիրահատության մի նոր մակարդակ ապահովել: Անցած ամռանը հիվանդի որովայնային զարկերակների լուսանցքի վերականգնումն առանց կտրվածքի և տեղային ցավազրկմամբ առաջին քայլն էր ոչ միայն մեր հանրապետությունում, այլև տարածաշրջանում: Նման ելքերը սովորաբար ապահովվում են բարձր տեխնոլոգիաների և լավագույն մասնագետների շնորհիվ: Հիմա նրա ղեկավարած բաժանմունքին ևս այստեղ լավագույն պայմաններ են տրամադրվել: Նորագույն տեխնոլոգիաների շնորհիվ սիրտ-անոթային հիվանդությունների բուժման բարձր որակ և արդյունավետություն է ապահովվում նաև պրոֆեսոր Հմայակ Սիսակյանի ղեկավարած ընդհանուր և ինվազիվ սրտաբանության կլինիկայում:



նիկայում: Վստահ եմ, որ, ընդհանուր առմամբ, անոթների վրա աշխատելու գործում գոնե առաջիկա մի քանի տարիների ընթացքում առաջատար ենք լինելու»:

Ռեկտորը նաև տեղեկացրեց, որ ամբողջ աշխարհում համալսարանական կլինիկաներն ամենաբարձրակարգներն են, որովհետև դրանցում աշխատում են առավել փորձառու մասնագետները, ովքեր միաժամանակ թե՛ բուժում են, թե՛ դասավանդում և թե՛ վերապատրաստում բժիշկներին: Ինչպես ամենուր, այնպես էլ Հայաստանում՝ համալսարանական կլինիկաները նաև համեմատաբար մատչելի են, որովհետև պրոֆեսորներից օգնում են նրանց ուսանողները, ովքեր լրացուցիչ վճարման կարիք չունեն:

Президент РА посетил больничный комплекс ЕГМУ

24-го марта текущего года президент РА Серж Саргсян посетил больничный комплекс N1 «Гераци» Ереванского государственного медицинского университета. Президент осмотрел вновь открытый хирургический корпус, ознакомился с результатами проведённой работы и осведомился о качестве предоставляемых услуг. Ректор ЕГМУ, профессор Дереник Думанян представил президенту вновь отремонтированные клиники, а также рассказал о том, какие возможности они открывают для приобщения студентов к современным методам медицины.

В корпусе размещены клиники общей хирургии, ЛОР-болезней, малой инвазивной сосудистой, челюстно-лицевой и детской хирургии, травматологии, а также вновь образовавшаяся клиника урологии и 8 новых операционных комнат.

«Во вновь открывшемся центре одновременно



могут проводиться 8 операций. В нейрохирургической клинике, находящейся рядом с данным отделением размещены ещё две операционные комнаты. Прибавив к этому операционную для микрохирургии, можно смело заявить, что в данный момент у нас нет недостатка в хирургических помещениях», - заявил ректор ЕГМУ, профессор Дереник Думанян.

«Операционные комнаты, оснащены мониторами,

что позволит студентам следить за всеми действиями хирурга в режиме реального времени. Главный врач будет разъяснять ход операции. Помимо этого, все операции будут записаны и употреблены в качестве учебного материала.

В беседе с журналистами министр образования и науки РА Армен Ашотян, подчеркнув значимость проделанной работы, сказал: «Все это подтверждает ту простую истину, что система образования Республики Армения переживает постепенное развитие. Наши вуз-ы способны вкладывать средства в создание базы для обеспечения развития профессиональных навыков своих студентов, и ЕГМУ, является одним из тех университетов, которые постоянно доказывают эту истину. Помимо этого, благодаря качественным специалистам и переоборудованным клиникам, медицинский играет огромную роль на рынке здравоохранения».

Отвечая на вопросы журналистов, ректор ЕГМУ, профессор Дереник Думанян отметил: «Мы будем продолжать работу по переустройству и переоборудованию клиник. Нашей целью является приведение всех клиник в соответствие с международными нормами. Помимо того, у нас проходят повышение квалификации специалисты из многочисленных других клиник, а посему мы обязаны обеспечить наилучшие условия, для построения доверительного к нам отношения. Мы предпринимаем серьезные шаги для продвижения в сфере стундирования сосудов и сохранения нашей передовой роли в регионе.

В возглавляемой профессором Рубеном Фанарджяном клинике общей и эндоваскулярной нейрохирургии проводится лечение сосудистой системы головного мозга, с применением новейших методов, в частности, внутрисосудистой хирургии.

Руководителю клиники малой и инвазивной сосудистой хирургии Рафаелу Манвеляну удалось обеспечить новый уровень качества в проведении операций эндоваскулярным методом. Благодаря новейшим технологиям, клиника общей и инвазивной кардиологии, возглавляемая профессором Амаяком Сисакяном обеспечивает высокое качество и эффективность лечения сердечно-сосудистых заболеваний».

Ректор сообщил также, что во всем мире университетские клиники являются самыми высококачественными, так как их сотрудниками являются наиболее опытные специалисты, которые одновременно проводят лечение, преподавание и переподготовку врачей. Как и во всем мире, в Армении университетские клиники, являются, к тому же, самыми доступными.



Ռեկտորատի հերթական նիստը

Մարտի 26-ին կայացած հերթական նիստի ժամանակ ԵՊԲՀ-ի ռեկտորատը հավանության արժանացրեց 2011-2012 ուսումնական տարվա շրջանավարտների պետական ավարտական ատեստավորումը կազմակերպելու և անցկացնելու նպատակով պետական որակավորման հանձնաժողովների նախագահների թեկնածություններն՝ ըստ մասնագիտությունների:

Որոշվեց ՀՀ կրթության նախարարի հաստատմանը ներկայացնել «Հերթացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի ակնաբուժական կլինիկայի ղեկավար, մանկական ակնաբուժության ամբիոնի վարիչ Արմեն Շաքարյանի (որպես բուժական գործ՝ 060100), մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի վարիչ Հրանտ Տեր-Պողոսյանի (որպես ստոմատոլոգիա՝ 060200) և «Լիկվոր» ՓԲԸ-ի տնօրեն Սերգեյ Սաթևոսյանի (որպես դեղագիտություն՝ 060300) թեկնածությունները:

ԵՊԲՀ-ի ռեկտոր, պրոֆեսոր Դերենիկ Դումանյանը հույս հայտնեց, որ ռեկտորատի կողմից ներկայացված թեկնածուները հավատարիմ կմնան համալսարանում որդեգրված ընդհանուր մոտեցումներին և պետական ավարտական ատեստավորման ընթացքում առավել օբյեկտիվություն հանդես կբերեն:

Ռեկտորատը քննարկեց նաև Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և կազմակերպման ու անցկացման կարգը:

Ռեկտորն անդրադարձավ կարգում կատարվող սկզբունքային փոփոխություններին, որոնք բխում են նաև միջազգային փորձագետների պահանջներից և կնպաստեն առավել օբյեկտիվ գնատամանը: Նա հանձնարարեց կատարել փոփոխություններ՝ հաշվի առնելով քննարկման ընթացքում հնչած առաջարկությունները:

Ռեկտորի հանդիպումը արտասահմանցի ուսանողների հետ

Կայացավ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Դերենիկ Դումանյանի հերթական հանդիպումը արտասահմանցի ուսանողների հետ:

Հանդիպման ընթացքում ուսանողները ռեկտորից հանգամանակից պարզաբանումներ ստացան իրենց հետաքրքրող բազմաթիվ հարցերի վերաբերյալ:

Թե՛ կրթական գործընթացներին, թե՛ կենցաղային խնդիրներին առնչվող հարցերը թեև շատ էին, սակայն իրենց բնույթով վկայում էին այն մասին, որ համալսարանում սովորող արտասահմանցի ուսանողները լուրջ մտահոգություններ կամ դժգոհություններ չունեն:

Բարձրացված այն հարցերի առիթով, որոնց հնարավոր չէր տեղում պատասխանել, ռեկտորը համապատասխան ծառայությունների ղեկավարներին հանձնարարեց ուսումնասիրել դրանք և անհրաժեշտ լուծումներ տալ:

Հանդիպման ընթացքում արտասահմանցի ուսանողներին ևս մեկ անգամ ներկայացվեցին իրենց իրավունքները, ինչպես նաև ուսման ընթացքում համալսարանի կողմից ներկայացվող պարտականությունները:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

Ղեկավարվելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 1716-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրությամբ և հիմք ընդունելով ռեկտորի համապատասխան հրամանները հաստատվել են բաց թողնված դասերի լրացման, ինչպես նաև լրացուցիչ դասերի ժամանակացույցի մասին կարգերը:

Բաց թողնված դասերի լրացման կարգը

Հաստատվել է համալսարանի ուսանողների բաց թողնված (բացակայած) դասերի լրացման հետևյալ կարգը.

1. Ուսանողները պարտավոր են ուսուցման մասին պայմանագրով նախատեսված պայմաններով և Համալսարանի կողմից սահմանված կարգով ու ժամկետներում կատարել ուսումնական ծրագրերով նախատեսված բոլոր առաջադրանքները, հաճախել դասերին՝ առանց ուշացման:

2. Եթե ուսանողը՝ ուսուցման մասին պայմանագրով նախատեսված վարձավճարի սահմաններում և Համալսարանի կողմից սահմանված ուսումնական ծրագրերով և ժամանակացույցով նախատեսված դասերից բացակայել է, Համալսարանի կողմից նախատեսվում են լրացուցիչ վճարովի դասընթացներ, հետևյալ պայմաններով՝

ա) 2 շաբաթ և ավելի տևողությամբ առարկաների

ցիկլային պարապմունքներից բացակայելու դեպքում ուսանողը պարտավոր է լրացնել յուրաքանչյուր բացակայած դասի 1 համապատասխան շաբաթը.

Գիկլերի ընթացքում դասի տևողությունը համընկնում է յուրաքանչյուր օրվա ուսուցման տևողությամբ՝ բ) դասերի բացթողումը (բացակայելը) դասերին չներկայանալն է և այն բացակայությունները, որոնք նշանակվել են ուսանողի՝ դասերից ուշանալու պատճառով: Դասից ուշացում է դիտվում դասի մեկնարկից և դասամիջոցից հետո ուշացումը.

գ) գործնական պարապմունքներին հաճախումների գրանցումը դասախոսի կողմից պետք է կատարվի դասի մեկնարկից հետո 5 րոպեի ընթացքում՝ ուսումնական մատյանում: Դասախոսություններից բացակայությունները գրանցվում են համապատասխան մատյաններում.

դ) ուսանողի ներկայության դեպքում դասամատյա-

նի համապատասխան վանդակում պետք է գրանցվի «ն» տառը, իսկ բացակայության դեպքում՝ «բ» տառը:

3. Սույն կարգը վերաբերում է՝

ա) ընդհանուր բժշկության ֆակուլտետում՝ ուսուցման 4-րդ և բարձր տարիներին,

բ) ստոմատոլոգիական ֆակուլտետում՝ ուսուցման 3-րդ տարվա երկրորդ կիսամյակին և բարձր տարիներին,

գ) դեղագիտական ֆակուլտետում՝ ուսուցման 4-րդ և բարձր տարիներին:

4. Լրացուցիչ դասընթացները, որպես կանոն, անցկացվում են ձմեռային և ամառային քննաշրջանների ընթացքում, որոնց ժամկետները սահմանվում են ռեկտորի կողմից:

5. Լրացուցիչ դասընթացների համար վճարման չափը որոշվում է՝ ելնելով ռեկտորի կողմից հաստատված յուրաքանչյուր առարկայի կրեդիտների գնացուցակից՝ համապատասխան ժամկետների համամասնական չափերով:

6. Ուսանողների բացակայությունները քննարկվում են և ներկայացվում է եզրակացություն՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի նախագահությամբ անցկացվող ուսումնական խորհրդի կողմից, որի կազմի մեջ են մտնում ուսումնամեթոդական վար-

չության պետը, համապատասխան ֆակուլտետների դեկանները, հաշվապահական բաժնի և իրավաբանական բաժնի ներկայացուցիչները, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից ներգրավված այլ աշխատողներ, ինչպես նաև ուսանողության ներկայացուցիչներ: Եզրակացությամբ հարգելի համարվող բացակայությունների հետևանքով լրացման վճարները փոխհատուցվում են Համալսարանի կողմից կամ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

7. Լրացուցիչ վճարովի դասընթացներին իրենց ցանկությամբ՝ կամավոր կարող են մասնակցել նաև դասերին լիարժեք մասնակցած բոլոր կուրսերի ուսանողները:

8. Պարտադիր լրացուցիչ դասընթացների համար դասախոսի ընտրությունը կատարվում է համապատասխան ամբիոնի վարիչի և դասախոսի համաձայնությամբ, իսկ կամավոր լրացուցիչ դասընթացների համար՝ ամբիոնի վարիչի, դասախոսի և ուսանողի համաձայնությամբ:

9. Պարտադիր լրացուցիչ դասընթացների համար համապատասխան դասախոսը վճարվում է հիմնական դասաժամերի համար սահմանված չափերով, իսկ կամավոր լրացուցիչ դասընթացների համար՝ ռեկտորի կողմից որոշված կարգով:

Լրացուցիչ դասերի ժամանակացույցի մասին

Նույն հիմքով հաստատվել է նաև 2011-12 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի լրացուցիչ դասերի անցկացման հետևյալ ժամանակացույցը՝

ա) մագիստրատուրայի ուսանողները բաց թողնված (բացակայած) դասերը կարող են լրացնել 2012 թվականի հունիսի 4-ից մինչև հուլիսի 10-ը և օգոստոսի 27-ից մինչև սեպտեմբերի 14-ը:

բ) բակալավրիատի ուսանողները բաց թողնված (բացակայած) դասերը կարող են լրացնել 2012 թվականի հունիսի 25-ից մինչև հուլիսի 10-ը և օգոստոսի 27-ից մինչև սեպտեմբերի 14-ը:

Կամավոր հիմունքներով լրացուցիչ դասերի հաճախման ժամանակացույցը, որպես կանոն, պետք է համընկնի սույն հրամանով սահմանված ժամկետներին:

Հ Ո Ք Ե Լ Յ Ա Ն

Լրացավ հանրապետությունում ճանաչված մանկական վիրաբույժ, 1975-97 թվականներին Երևանի պետական բժշկական համալսարանի մանկական վիրաբուժության ամբիոնի վարիչ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **ԱԼԲԵՐՏ ԱՆԳՐԱՆԻԿԻ ՎԱՆՅԱՆԻ** ծննդյան 80-ամյակը:

Այս առիթով շնորհավորում ենք անվանի գիտնականին, մաղթում առողջություն, հաջողություններ, անսպառ եռանդ այն ասպարեզում, որի շրջանակներում դեռևս ակտիվորեն իրականացնում է իր գործունեությունը՝ ի նպաստ մանկական առողջապահության:

ԵՐԵՎԱՆԻ ՄԵԻԹԱՐ ՀԵՐԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԱՍ

«ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ



Ջանքերի արդյունքում՝ կանանց միամսյակ

Ո՞վ է ապրիլի 7-ի՝ համեմատաբար նոր տոնի հեղինակը՝ հարցին պատասխանում է կանանց միամսյակի ստեղծման «մեղավորը»՝ ՀՀ սփյուռքի նախարար, մեր համալսարանի կառավարման խորհրդի անդամ, Հայ կանանց միջազգային միության նախագահ Հրանուշ Հրանտի Հակոբյանը:

Փարբիել հրեշտակապետը ավետում է Մարտի 8-ը՝ Մարտի 8-ը, որ նրանից ծնվելու է Աստուծո զորքին՝ մարդկության Փրկիչը: Մեր անկախացման առաջին տարիներից Աստվածածնի Ավետման տոնը հռչակվեց իբրև մայրության տոն: Այդ օրը Հայոց եկեղեցու բոլոր տաճարներում սբ. պատարագի ավարտին կատարվում է մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության հատուկ կարգ:

Քանի որ ապրիլի 7-ին նախորդում է մարտի 8-ը, մեր իրականության մեջ կանանց օրը կամաց-կամաց վերածվեց կանանց միամսյակի: Այս մասին է մեր զրույցը տիկին Հրանուշ Հակոբյանի հետ:

- Մարտի 8-ը նախորդ դարերում խնորված տոն է: Այն առաջ է քաշվել 1910 թվականին՝ հայտնի գերմանուհի սոցիալ-դեմոկրատ, հեղափոխական Կլարա Ցետկինի կողմից և մինչ օրս նշվում է: Ցետկինը միջազգային ասպարեզում կարողացավ հասնել այն բանին, որ որոշ չափով պաշտպանվեցին կանանց իրավունքները, նրանց տրվեցին որոշակի արտոնություններ, ընդունվեց համապատասխան հռչակագիր: Մարտի 8-ը օրացույցում կարմիրով նշվեց և հռչակվեց կանանց իրավունքների պաշտպանության միջազգային օր: Մինչև խորհրդային Միության ստեղծումը կանայք ամեն տարի ցույցեր էին անում, փողոց էին դուրս գալիս և պահանջներ ներկայացնում, նույնիսկ երթեր էին կազմակերպում՝ գոալներով հարվածելով կաթսաներին: Նրանք այդ կերպ ընդվզում էին ցածր աշխատավարձի և աշխատանքային ոչ բարենպաստ պայմաններ

րի դեմ, պահանջում էին նոր իրավունքներ, որովհետև 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի սկիզբը կանայք ո՛չ ընտրելու, ո՛չ ընտրվելու, ո՛չ էլ, բնականաբար, պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեին: Խորհրդային տարիներին, սակայն, Մարտի 8-ի իմաստը փոխվեց: Բնականաբար, իշխանությունը թույլ չէր տա, որ որևէ մեկը խոսեր իրավունքների պաշտպանությունից, այդ պատճառով էլ մարտի 8-ը հայտարարվեց կանանց միջազգային օր՝ առանց «պայքար» և «իրավունք» բառերի: Ուղղակի տոն՝ նշելու, հիշելու կանանց, մասնավորապես որ խորհրդային տարիներին կանայք թե՛ տնտեսության, թե՛ մշակույթի և կրթության բնագավառում, ինչպես նաև քաղաքականությունում, լուրջ դերակատարություն ունեին:

Հայաստանի անկախացումից հետո մեր ազգային տոնացույցից Մարտի 8-ը ընդհանրապես հանվեց: Համարեցին, որ դա խորհրդային հասարակարգի մնացուկ է և չպետք է տոնել: Չմայած օրացույցում այդ տոնը չկար՝ մեզ մոտ շարունակում էին տոնել այն, և ես, լուրջ քննարկումներ ունենալով խորհրդարանի տարբեր խմբակցությունների, կուսակցությունների ներկայացուցիչների հետ, հասկացա, որ Մարտի 8-ը վերականգնել հնարավոր չէ: Ուստի նախաձեռնեցի և շատ դժվարությամբ խորհրդարանին կարողացա համոզել՝ ապրիլի 7-ը հռչակել Մայրության և գեղեցկության տոն: Տարիներ հետո, երբ խորհրդային նախկին կարգերի նկատմամբ հասարակական թշնամանքը մեղմվեց, 2002 թվականին մենք վերականգնեցինք նաև Մարտի 8-ը, իսկ մինչ վերականգնումը ես հայտարարեցի, որ Մարտի 8-ը միջազգային տոն է, ՄԱԿ-ի կողմից ընդունված օր, հետևաբար որևէ մեկը ո՛չ փոխել կարող է, ո՛չ հանել, ո՛չ էլ արգելել այն: Նաև նշեցի, որ կանանց տոնը մենք սկսելու ենք մարտի 8-ին և ավարտելու ենք ապրիլի 7-ին: Այդպես ծնվեց «մեկամսյակի» գաղափարը: Այնուհետև մենք տոնացույցով վերականգնեցինք Մարտի 8-ը, և արդյունքում հայ կինն այսօր երկու տոն ունի՝ Կանանց միջազգային օրն ու Մայրության և գեղեցկության օրը:

- Իսկ ո՞րն է այս տոներից Ձեզ համար առավել ընդունելին:

- Քանի որ ես այս երկու տոների կայացման կենտրոնում եմ եղել՝ մեկի ստեղծման, մյուսի վերականգնման առումով, դրա համար երկուսն էլ թանկ են ինձ համար: Ո՛չ նրա համար, որ ինքս կին եմ, այլ նրա համար, որ ես նախաձեռնողն ու կազմակերպիչներից եմ եղել տոների, որոնց արդյունքում մի ողջ ամիս հասարակության ուշադրությունը բևեռվում է կանանց վրա: Այդ օրերին մարդիկ կարծես ավելի մեղմանում են, ջերմանում, բարիանում: Կարծում եմ՝ որքան մեր կյանքում տոները շատ լինեն, հասարակությունը այնքան բարի կլինի, ջերմ կլինի, այնքան միավորված կլինի, և տա Աստված, որ մեր կյանքի մնացած օրերն էլ տոնի վերածվեն, որովհետև ինչքան հոգիդ խնդուն է, հանգիստ է և ոգևորված, այնքան աշխատանքդ հետաքրքիր և արդյունավետ է:

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

Մայրության և գեղեցկության
տոնի առիթով՝ ի դեմս
բժշկական համալսարանի
ռեկտորի մամուլի քարտուղարի,
շնորհավորում ենք բոլոր կին
համալսարանականներին,
մաղթում ամենայն բարիք:
Նույն առիթի բերմամբ
ներկայացնում ենք
Անահիտ Չայթայանին



Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինը:

Ստեղծման առաջին իսկ շաբաթից՝ երկար տարիներ աշխատել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, զրել է հիմնականում առողջապահական թեմաներով:

Երեք տարի ղեկավարել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության մամուլի ծառայությունը: Այդ ընթացքում՝ 2009-ին, նրա ղեկավարած բաժինը Տեղեկատվության ազատության ամենամյա մրցանակաբաշխությամբ արժանացել է «Ոսկե բանալի» մրցանակի՝ որպես հասարակայնության և զանգվածային լրատվամիջոցների հետ լավագույն և թափանցիկ աշխատող գերատեսչություն:

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում տպագրված լավագույն լրագրողական հետաքննական նյութի համար արժանացել է «Վահագն 2003» մրցանակի:

Լրագրության ոլորտում երկարամյա և արգասաբեր աշխատանքի, ցուցաբերած մասնագիտական բարձր կարողությունների համար 2010թ. հոկտեմբերին ՀՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

2011-ի ապրիլից Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտորի մամուլի քարտուղարն է: Զբաղվում է զանգվածային լրատվամիջոցներում համալսարանի գործունեության լուսաբանմամբ, ինչպես նաև բուհի պաշտոնական կայքի նորացումով:

2000 թվականից Հայ կանանց միջազգային ասոցիացիայի (AIWA) անդամ է:

Համալսարանական կլինիկաները՝ նորացված

«Մեր համալսարանի առաքելությունը երկրին լավագույն մասնագետներ տալն է: Մենք պարտավոր ենք նտածել մեր քաղաքացիների առողջության մասին»։ Վերջին մեկ տարում տարբեր քննարկումների, խորհրդակցությունների ընթացքում այս արտահայտությունը հաճախ է կրկնում Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Դերենիկ Դումանյանը:

Այդ նպատակով համակողմանի բարեփոխումներ են իրականացվում թե՛ կրթական, թե՛ բուժական ոլորտ-

ներում: Այսօր բուժական հատվածին անդրադառնալու պահն է:

«Դեռ անցած տարվա հունիսին «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրից «Մուրացան» տեղափոխվեցին մանկական բաժանմունքները: Կենտրոնացման և համալիր ծառայությունների շնորհիվ այնտեղ զգալիորեն բարելավվեց մանկաբուժական ծառայության որակը, իսկ հիվանդանոցը դարձավ մանկական ուղղվածություն ունեցող առաջատար բժշկական կենտրոններից մեկը: «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համա-

լիրում ազատված տարածքներն անմխիթար վիճակում էին, և այդ պայմաններում ուղղակի անհնար էր որևէ ծառայություն կազմակերպել, իսկ ուսանողներին աշխարհի առաջատար տեխնիկայից օգտվելու մեր մասնագետների փորձի ցուցադրման մասին մտածել անգամ չէինք կարող: Այդ պատճառով որոշեցինք առաջին հերթին վերանորոգել մասնաշենքի երկու հարկը և այստեղ կենտրոնացնել վիրահատական ուղղվածություն ունեցող կլինիկաներն ու վիրահատարանները, քանի որ դրանք ևս լավ վիճակում չէին: Մեծածավալ շինարարական աշխատանքներ էինք նախաձեռնում և ճիշտ համարեցինք միանգամից թերապևտիկ մասնաշենքի երրորդ հարկը ևս ընդգրկել»,- ասում է ԵՊԲԶ ղեկավար, պրոֆեսոր Դերենիկ Դումանյանը:

Ընդամենը մի քանի ամսվա ընթացքում ամեն ինչ հիմնովին փոխվել է: Նախկինից, թերևս, միայն պատերն են մնացել: Հենց մուտքից աչք շոյող գույներն ու մաքրությունը, լուսային ժամանակակից լուծումները, կահավորանքը հաճելի տրամադրություն են ստեղծում: Կլինիկաները ներկայանում են ոչ միայն գեղեցիկ տեսքով, այլև միջազգային ժամանակակից բոլոր չափորոշիչներն ապահովող նորագույն տեխնիկայով:

Նորացված երկու հարկաբաժիններում տեղակայվում են ընդհանուր վիրաբուժության (ղեկավար՝ բժշկագիտության դոկտոր, պրոֆեսոր Մուշեղ Միրիջանյան), քիթ-կոկորդ-ակնաջաբանության (ղեկավար՝ բժշկագիտության դոկտոր, պրոֆեսոր Արթուր Շուբուրյան), փոքր ինվազիվ անոթային վիրաբուժության (ղեկավար՝ բ.գ.դ. Ռաֆայել Մանվելյան), դիմածոտային վիրաբուժության (ղեկավար՝ բ.գ.թ., դոցենտ Աննա Պողոսյան), մանկական վիրաբուժության (ղեկավար՝ բ.գ.թ. Մելիք Ռոստոմյան), վնասվածքաբանության (ղեկավար՝ բ.գ.թ., դոցենտ Արսեն Ազիզբեկյան), ինչպես նաև նոր կազմավորված ուրոլոգիայի (ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Ծատուրյան) կլինիկաները:

Յուրաքանչյուր ծառայություն իր առանձին վիրահատարան ունի՝ հագեցած նորագույն լամպերով ու սեղաններով, Drager հեղինակավոր ֆիրմայի անզգայացման լավագույն սարքերով, անհրաժեշտ այլ տեխնիկայով: Առանձին վիրահատարանում կկատարվեն լապարոսկոպիկ եղանակով վիրահատությունները:

Ինչ խոսք, վիրաբուժական ուղղվածությամբ կլինիկաների արդյունավետ գործունեությունն անհնար է պատկերացնել առանց ժամանակի պահանջներին համապատասխանող անզգայացման և ինտենսիվ թերապիայի: Պրոֆեսոր Իրինա Մալխասյանի ղեկավարությամբ անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի կլինիկայի բարձր որակավորում ունեցող մասնագետները վիրահատական միջամտությունների անեսթեզիոլոգիական և ռեանիմատոլոգիական բարձրակարգ սպասարկում են իրականացնում: Կլինիկան հագեցած է ամենաժամանակակից սարքավորումներով՝ ընդհանուր անզգայացման և արհեստական շնչառության ապահովման նորագույն էքսպերտային

դասի սարքերով (Hamilton, Drager հանրահայտ ֆիրմաների), հիվանդների մոնիտորինգի կենտրոնացված համակարգով (Schiller ֆիրմայի) և անհրաժեշտ այլ սարքավորումներով, ինչի շնորհիվ անեսթեզիոլոգիական և ինտենսիվ թերապիայի ժամանակակից չափանիշներին համապատասխան տարբեր միջամտություններ են կատարվում:

Դեռևս 1934-ին պրոֆեսոր Հ. Քեչեկի կողմից այս հիվանդանոցում հիմնադրված վիրաբուժական կլինիկայում, որտեղ մշտապես ճանաչված մասնագետներ են աշխատել, միշտ էլ վիրաբուժական միջամտության նորագույն մեթոդներ են կիրառվել՝ պահպանելով առաջատարի դիրքերը: Նորացված պայմաններն, անտարակույս, նոր պահանջներ ու պարտավորվածություն է ենթադրում: Կլինիկայի ղեկավար, պրոֆեսոր Մուշեղ Միրիջանյանն այս առումով չի առանձնացնում բուժական և կրթական ասպարեզները:

Ուշագրավ է, որ փոքր, ինվազիվ անոթային վիրաբուժության կլինիկան դեռ չափազանց սուղ պայմաններում կարողացավ էնդովասկուլյար եղանակով վիրահատության մի նոր մակարդակ ապահովել: Կլինիկայի երիտասարդ ղեկավար, բժշկական գիտությունների դոկտոր Ռաֆայել Մանվելյանի կողմից անցած ամռանը հիվանդի որովայնային զարկերակների լուսանցքի վերականգնումն առանց կտրվածքի և տեղային ցավազրկմամբ առաջին քայլն էր ոչ միայն մեր հանրապետությունում, այլև տարածաշրջանում: Նման ելքերը սովորաբար ապահովվում են բարձր տեխնոլոգիաների և լավագույն մասնագետների շնորհիվ:

«Կյանքն աներևակայելի արագությամբ առաջ է գնում՝ նոր, ավելի բարձր պահանջներ պարտադրելով: Դրան համընթաց գնալու համար պարտավոր ենք մշտապես հետևել մեր ոլորտում արձանագրվող հաջողություններին և փորձել հետ չմնալ:

Սա կրթական բուժաստատություն է: Ուստի շարունակական զարգացումներ ապահովելով, վերագինվելով, սպասարկումների որակը բարձրացնելով, պետք է հասնենք մեր գերագույն նպատակին՝ լավ բժիշկներ պատրաստելուն: Մենք լուրջ քայլեր ենք իրականացնում նաև մեր մասնագետների վերապատրաստումն արտասահմանյան առաջատար կլինիկաներում կազմակերպելու ուղղությամբ»,- ասում է Դերենիկ Դումանյանը:

Ակնհայտ է, որ համալսարանական հարկի տակ հիվանդանոցային բուժօգնության կազմակերպման ոլորտում 21-րդ դարին վայել նոր մի մակարդակ է ապահովվել:

Սա ենթադրում է, որ հաջորդը, որտեղ էլ որ լինի՝ կամա, թե ակամա՝ պիտի փորձեն ավելի լավ ստեղծել: Իսկ դրանից կշահի մեր երկիրը, մեր ժողովուրդը...

ԱՆԱԴՐՏ ՀԱՅԹԱՅԱՆ
«Հայաստանի Հանրապետություն»

ԵՊԲՀ ՈՒՒՍ-Ը 20 տարեկան է

Նարունակում ենք ներկայացնել Հայաստանի Հանրապետության առաջին ուսանողական խորհրդարանի նախագահներին

1999-2003 թվականներին ԵՊԲՀ ուսանողական խորհրդարանի աշխատանքները ղեկավարել է ներկայումս ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը: Չնայած իր բազմազբաղվածությանը ՀՀ ԿԳ նախարարն ակտիվորեն մասնակցում է բժշկական համալսարանում իրականացվող միջոցառումներին, ծրագրերին՝ դառնալով ջատագովը այն կրթօջախի, որի սանն է եղել:

Ներկայացնել ՈՒՒՍ նախագահի ողջ գործունեությունը դժվար է: Այն չափազանց մեծ ընդգրկում ունի: Նշենք միայն մեկ փաստ...



Ըստ ՀՀ ԿԳ նախարարի...


Հայաստանի կրթական համակարգում կիրականացվի Եվրոպական միության կրթական համակարգի ընդլայնման ծրագիր

ՀՀ կառավարության վերջերս կայացած միատուն կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը նշեց, որ ծրագրի նպատակն է ապահովել Հայաստանի միջին և բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի հետագա զարգացումը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի նոր փուլի՝ 2010-20 թթ. նպատակներին համահունչ:

Ծրագրով կշարունակվեն և կխորացվեն բարձրագույն կրթության ու միջին մասնագիտական ոլորտի բարեփոխումները՝ Թուրինի գործընթացի համատեքստում, կընդլայնվի ԵՄ անդամ երկրների հետ երկկողմ և բազմակողմ համագործակցությունը և ԵՄ աջակցության գործիքներին և ծրագրերին մասնակցությունը: Ակնկալվում է, որ այս ամենի արդյունքում ՀՀ կրթական համակարգը կընդգրկվի ԵՄ-ի հանրակրթության ոլորտի նոր սկզբնական ծրագրերում:



Երբ Արմեն Աշոտյանը բժշկականի ուսանողական խորհրդարանի նախագահն էր...



Հանրապետության ԲՈՒՀ-երի մեծ մասն ունեին իրենց պաշտոնաթերթերը: Բժշկականի խորհրդարանականները որոշեցին ստեղծել ուսանողական թերթ: Հանրապետությունում առաջին ուսանողական թերթի՝ Medicus-ի կնքահայրը բժշկական համալսարանի ուսանողական խորհրդարանի նախագահ Արմեն Աշոտյանն էր: Նախաձեռնությունը օրինակ հանդիսացավ մյուս բուհերի համար՝ ունենալ իրենց ուսանողական թերթերը:

հղեյ՝ մի հետաքրքիր փաստի մասին ևս: Ներկայումս, երբ առիթ եմ ունենում լսել ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի ստեղծագործական հաջողությունների մասին՝ բանաստեղծություններ, երաժշտություն, հիշում եմ այն օրը, երբ երկուստեք փոխհամաձայնության գալով՝ որոշեցինք «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» ընթերցողների դատին ներկայացնել Արմեն Աշոտյանի բանաստեղծությունները՝ առանց մշելու հեղինակի անունը: Քիչ է ասել՝ բանաստեղծությունները դուր եկան «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» ընթերցողներին: Ավելին՝ մինչև օրս հիշում եմ մորը մկրված նրա բանաստեղծություններից շատ հուզիչ հատվածներ...

Ս.ԹՈՐՈՍՅԱՆ

Առաջարկություն, որի արձագանքը բավականին խոսուն եղավ



Հիշեցնենք՝ Արմեն Աշոտյանի նախածնունդային օրը սոցիալական ցանցերից մեկում սկսվեց ստորագրահավաք, իսկ ավելի վաղ նա Անահիտ աստվածուհու հանրահայտ արձանի բեկորները՝ գլուխն ու ձեռքերը վերադարձնելու անհրաժեշտության մասին բարձրաձայնել էր «Ֆեյսբուքի» իր անձնական էջում, ինչին ի պատասխան ՀՀ-ում Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպանը չէր բացառել, որ արձանը ՀՀ բերվի՝ ժամանակավոր թանգարանային ցուցադրության կարգավիճակով:

Անահիտ աստվածուհու արձանի մասունքները վերադարձնելու ստորագրահավաքին մասնակցեցին նաև բժշկականի պատվիրակները



ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպաններ տիկին Քեթրին Ջեյն Լիչին և պարոն Ջոնաթան Ջեյմս Էյվին հասցեագրված ուղերձի տեքստում մասնավորապես ասված է. «Մենք՝ ներքոստորագրյալներս, հանդես ենք գալիս հայկական մշակութային և պատմական արժեքները հայրենիք

վերադարձնելու նախածնունդային: Աշխարհի թանգարաններում այսօր պահպանվում և ցուցադրվում են բազմաթիվ ստեղծագործություններ, որոնք հայկական մշակույթի նմուշներ են: Մշակութային այդ արժեքների թվում են Բրիտանական թանգարանում պահպանվող Անահիտ աստվածուհու բրոնզաձուլված քանդակը: Մենք կոչ ենք անում՝ Հայաստանին վերադարձնել մշակութային այդ պատմական արժեքները պետք է պահպանվեն ու ցուցադրվեն այն երկրում, որտեղ ստեղծվել են և որի պատմության կրողներն են»:

Դեսպաններին հղված ուղերձում երախտիքի խոսք էր ասվում Մեծ Բրիտանիային՝ հայկական մշակու-

թայաստանից և Սփյուռքից ավելի քան 20.000 հայ պահանջում է Մեծ Բրիտանիայից Հայաստան վերադարձնել Անահիտ աստվածուհու բրոնզաձուլված արձանը: Իրականացված ստորագրահավաքին կցված է նույնպիսի պահանջով ուղերձ, որը հանձնվեց Հայաստանում Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի Միացյալ թագավորության դեսպանատանը՝ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի նախագահ Կարեն Ավագյանի կողմից:

Դեսպանատան մոտ հավաքված բազմաթիվ երիտասարդների ձեռքերին կարելի էր տեսնել Անահիտ աստվածուհու նկարը՝ «Անահիտ, արի՛ տուն» գրառումներով: Նշենք, որ ակցիայի օրը՝ պատահական չէր ընտրված և համընկնում է կանանց և գեղեցկության միջազգային օրվա նախօրեին:

Նշենք, որ Բրիտանական թանգարանում հեղինակման արձանի մասունքները հայտնաբերվել են 19-րդ դարի վերջին՝ Արևմտյան Հայաստանում հայ գյուղացիների կողմից, այնուհետև տեղափոխվել Անգլիա:

Արմեն Աշոտյանն ու Կարեն Ավագյանը ստորագրահավաքի մասնակիցների ուղերձը Միացյալ Թագավորության կին դեսպանին հանձնելու գնացին ծաղկեփնջով:



թային ժառանգությունը թուրքական վանդալիզմից փրկելու և պահպանելու համար: «Սակայն պատմական արդարությունը պահանջում է, որպեսզի Անահիտ աստվածուհու արձանի մասունքները հայրենադարձվեն և հանգրվանեն ծագման երկրում: Հանդգված ենք՝ Մեծ Բրիտանիան կհարգի մեր նախածնունդունը և կվերադարձնի Անահիտ աստվածուհու արձանի մասունքները»,- ասված է ուղերձում:

ԵՊԲՀ ՈՒՒՍ-Ը 20 տարեկան է

2012-ը հոբելյանական է Հայաստանի Հանրապետության առաջին ուսանողական խորհրդարանի համար

Հոբելյանի շրջանակներում Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում կազմակերպվեց «Medicus-ի օրեր» փառատոն, որը ներկայացնում է հանրապետությունում առաջին ուսանողական բերրի «Medicus»-ի խմբագիր Էմիլ Ավետիսյանը:

Ինտելեկտուալ խաղեր

Փառատոնի շրջանակներում մարտի 19-20-ը տեղի ունեցավ ինտելեկտուալ խաղերի միջբուհական արդեն ավանդական դարձած մրցաշար, որին մասնակցում էին հանրապետության տարբեր բուհերի 18 թիմեր:

Առաջին փուլում տարբեր բուհերի թիմերն իրենց ուժերը չափեցին «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղում, որում հաղթող ճանաչվեց Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի «Արեոպագ» թիմը: Երկրորդ փուլում «Էրուդիտ-քառյակ» և «Բրեյն-ռինգ» մրցաշարերն էին: Առաջինում հաղթեց ԵՊԲՀ-ի «Արքիմեդ», իսկ երկրորդում՝ Հայ-



կատվության ոլորտի լուսաբանմանը նվիրված «Medicus EXPO-2012» ցուցահանդես-մրցույթ:

Անվանակարգերը հինգն էին՝ ուսանողական լավագույն թերթ, ուսանողական ինքնակառավարման մարմնի լավագույն կայք, լավագույն տեղեկագիրք, ուղեցույց, լավագույն բուկլետ, հրավիրատուն և լրատվության լավագույն այլընտրանքային միջոցներ: Ցուցահանդես-մրցույթին մասնակցեցին Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական, Երևանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական, Հայ-ռուսական (Սլավոնական), Հայաստանի պետական տնտեսագիտական և Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանները: Ժյուրին ևս կազմված էր մասնակից համալսարանների ներկայացուցիչներից: Առաջին չորս անվանակարգերում հաղթեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, իսկ լրատվության լավագույն այլընտրանքային միջոցներ (ռադիոհանգույց, տեղեկատվության հեռուստատեսային տարբերակ, այլ պարբերականներում տպագրություններ և այլն) անվանակարգում՝ Հայ-ռուսական (Սլա-



ռուսական համալսարանի «Black Stars» թիմը: Խաղերի վերջում տեղի ունեցավ մրցանակաբաշխություն, հանձնվեցին հավաստագրեր, գրքեր, ՈւՒՍ-ի լոգոյով հուշանվերներ:

Հաջորդ կիսամյակում ԵՊԲՀ-ի ուսանողական խորհրդարանը նախատեսում է կազմակերպել ներբուհական ինտելեկտուալ մրցաշար՝ դասախոսական և ուսանողական թիմերի մասնակցությամբ:

Մրցաշարի մասին առավել մանրամասն կարող եք տեղեկանալ ԵՊԲՀ-ի ուսանողական խորհրդարանի կայքից՝ www.amsp.am:

«Medicus EXPO 2012»

Մարտի 20-ին Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ուսանողական խորհրդարանի հիմնադրման 20-ամյակին նվիրված միջոցառումների շարքում կայացավ ուսանողական ինքնակառավարման մարմինների լրատվության ու տեղե-

վոնական) համալսարանը: Հաղթողներն արժանացան մրցանակների, իսկ բոլոր մասնակիցները ամփոփիչ միջոցառման ժամանակ կատարված հուշանվերներ ու վկայականներ: Միջոցառումը լավ առիթ էր տարբեր բուհերի ուսանողների միջև նոր կապերի ստեղծման և ամրապնդման համար:



Ուսանողական գիտաժողով



ԵՊԲՀ-ի ուսանողական գիտական ընկերությունը փառատոնի շրջանակներում մարտի 21-ին կազմակերպեց գիտաժողով՝ «Խոսքի, ձայնի և մտածողության հոգեբանական և ֆիզիոլոգիական ազդեցությունը» թեմայով, որի ընթացքում հնչեցին զեկույցներ՝ «Տատանումներ, բնության ձայներ», «Ձայնի վիրացիոն ազդեցությունը օրգանիզմի վրա», «Մանտրայոգա», «Ինֆրաձայն՝ ակուստիկ զենք», «Ուլտրաձայն և դեֆինաթերապիա», «Խոսքի ֆիզիոլոգիական ազդեցությունը», «Խոսքի և ձայնային ալիքների ազդեցությունը պտղի զարգացման վրա», «Աղոթքի հոգեֆիզիոլոգիա», «Երաժշտաթերապիա», «Սուտ և մարմնի լեզու», «Չնետորիկա, կառավարման արվեստ», «Հիպնոս» թեմաներով: Գիտաժողովին ներկա էին պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, հոգևորականներ, ուսանողներ, հյուրեր: Ձեկուցումներից հետո տեղի ունեցավ քննարկում՝ ներկայացված թեմաների արդիականության և բժշկական պրակտիկայում դրանց հնարավոր կիրառման մասին:

ԵՊԲՀ-ի ուսանողական գիտական ընկերությունը փառատոնի շրջանակներում մարտի 21-ին կազմակերպեց գիտաժողով՝ «Խոսքի, ձայնի և մտածողության հոգեբանական և ֆիզիոլոգիական ազդեցությունը» թեմայով, որի ընթացքում հնչեցին զեկույցներ՝ «Տատանումներ, բնության ձայներ», «Ձայնի վիրացիոն ազդեցությունը օրգանիզմի վրա», «Մանտրայոգա», «Ինֆրաձայն՝ ակուստիկ զենք», «Ուլտրաձայն և դեֆինաթերապիա», «Խոսքի ֆիզիոլոգիական ազդեցությունը», «Խոսքի և ձայնային ալիքների ազդեցությունը պտղի զարգացման վրա», «Աղոթքի հոգեֆիզիոլոգիա», «Երաժշտաթերապիա», «Սուտ և մարմնի լեզու», «Չնետորիկա, կառավարման արվեստ», «Հիպնոս» թեմաներով: Գիտաժողովին ներկա էին պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, հոգևորականներ, ուսանողներ, հյուրեր: Ձեկուցումներից հետո տեղի ունեցավ քննարկում՝ ներկայացված թեմաների արդիականության և բժշկական պրակտիկայում դրանց հնարավոր կիրառման մասին:

«Տուբերկուլոզ և 21-րդ դարը»

Հայաստանի Երիտասարդական հիմնադրամի և ԵՊԲՀ-ի Երիտասարդ գիտնականների խորհրդի կողմից մարտի 23-ին համալսարանի կապույտ դահլիճում անկացվեց «Տուբերկուլոզ և 21-րդ դարը» թեմայով քննարկում: Ներկա էին ԵՊԲՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Միքայել Նարիմանյանը, ՀԵՀ հոգաբարձուների խորհրդի համակարգող Կարեն Ավագյանը, ԵՊԲՀ-ի ուսանողական խորհրդարանի նախագահ Կարեն Ակոբյանը, բժիշկներ, համալսարանականներ, ուսանողներ, հյուրեր:

Բացման խոսք ասացին ԵՊԲՀ-ի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Միքայել Նարիմանյանը և համալսարանի Երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ Նարեկ Քամայանը:

Տուբերկուլոզի բուժման և կանխարգելման առկա հիմնախնդիրների մասին զեկուցումով հանդես եկավ հանրապետական հակատուբերկուլոզային դիսպան-

սերի բժիշկ Լյուբով Նիկոլայանը: Իսկ ԵՊԲՀ-ի ուսանողական խորհրդարանի ուսումնասնաթղական հանձնաժողովի նախագահ Մարիամ Մովսիսյանը հանդես եկավ «Տուբերկուլոզը Հայաստանում և աշխարհում» թեմայով զեկուցմամբ: Ուսանողական խորհրդարանի միջազգային կապերի հանձնաժողովի նախագահ Խաչատուր Մարգարյանը ներկայացրեց ուսանողական կամավորական շարժումների դերը տուբերկուլոզի կանխարգելման անհրաժեշտության գործում:

Հիշեցնենք, որ մարտի 24-ը տուբերկուլոզի դեմ պայքարի համաշխարհային օրն էր: 1882թ. մարտի 24-ին գերմանացի մանրէաբան Ռ.Կոխը հայտարարեց տուբերկուլոզի հարուցչի հայտնաբերման մասին: Դրանից 111 տարի անց՝ 1993 թվականից ի վեր, մարտի 24-ը ողջ աշխարհում նշվում է որպես տուբերկուլոզի դեմ պայքարի համաշխարհային օր:

Ի դեպ՝ ամեն տարի 1.6 մլն մարդ է մահանում տուբերկուլոզից՝ մեծ մասը զարգացող երկրներում:



ԵՂԵՌՆԻ ՋՈՐԵՐԻ ՀՈՒՇԱՅԱՄԱԼԻՐ

Դու գիտե՞ս, որ ...



Խորհրդային Հայաստանում երկար ժամանակ եղեռնի թեմայի վրա արգելք էր դրված: Վերջին անգամ եղեռնի զոհերի հիշատակին Հայաստանում եկեղեցիների զանգերը դողանջել են 1926թ. ապրիլի 24-ին, քանզի ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի 1926թ. օգոստոսի 31-ի որոշմամբ հանձնարարվել է «բանակցություններ վարել կաթողիկոսության հետ համաշխարհային պատերազմի զոհերի հիշատակի օրը (24 ապրիլի) նշելը վերացնելու անհրաժեշտության մասին»:

Հայտնի է նաև, որ ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող առաջին կոթողը՝ փոքրաչափ մի մատուռ, 1950-ական թվականներին կառուցվել է Անթիլիասում, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի վեհարանի տարածքում, ուր ամփոփված են Դեյր էլ Ջոր անապատից բերված ցեղասպանության զոհերի աճյունները:

կի առթիվ կայանալիք միջոցառումների ցանկում ընդգրկելու մասին:

Դա 1964 թվականն էր, երբ առաջին անգամ ԽՍՀՄ Կենտկոմը անդրադառնում էր եղեռնին: Առաջարկը մոտավորապես ձևակերպված էր այսպես՝ **Երևանում կանգնեցնել առաջին համաշխարհային պատերազմում զանգվածային բնաջնջման ենթարկված հայ զոհերի հիշատակին կոթող կառուցելու մասին:**

Մոսկվան ընդունում է առաջարկը մարտի 16-ին: Խորհրդային ավանդույթներին համապատասխան՝ որոշման առաջին կետում հուշարձանի կառուցումը կապվում է «հանրապետության աշխատավորության ու հասարակական կազմակերպությունների ցանկությունների» հետ, և երկրորդ կարևոր հանգամանքը այն էր, որ որոշման մեջ հիշատակվում էր ԵՂԵՌՆ քառը: Որոշման հաջորդ կետերով հանձնարարվում է Հայաստանի Խորհրդային Հանրապետության Պետշինին՝ հայտարարել կոթողի լավագույն նախագծի բաց մրցանակաբաշխություն և կոթողի կառուցումն ավարտել 1965 թվականին: Ներկայացված 78 նախագծերից՝ երկարատև քննարկումից հետո որոշվում է մրցույթին մասնակցելու իրավունք շնորհել 8-ին, որոնց մեջ կային նաև Խորհրդային ավանդույթներին բնորոշ առաջարկություններ: Մասնավորապես առաջարկվում էր կառուցել «Վերածնունդ» կոթող, որտեղ Լենինը իր փրկության

Մեծ եղեռնի զոհերի հիշատակին հուշարձան կառուցելու գաղափարը առաջին անգամ արծարծվել է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յակոբ Ջարուբյանի և լիբանանահայ հասարակական գործիչ Անդրանիկ Ծառուկյանի 1962-ին կայացած հանդիպման ժամանակ, որից հետո հուշարձան բացելու մասին առաջարկություն է ուղարկվել Մոսկվա՝ 1915 թվականին հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյա-

ծեռքն էր մեկնում կործանման եզրին հասած հայ ժողովրդին:

Ինժեներների մի խումբ առաջարկում էր եղեռնի հուշարձանը տեղադրել Հաղթանակի զբոսայգում «անգործության մատնված» Ստալինի մոնումենտի պատվանդանի վրա՝ կախելով մի մեծ գանգ, որը հնչեցնել յուրաքանչյուր տարվա ապրիլի 24-ին: Առաջարկվեց նաև խնդրել Երևանի քաղաքապետի գործկոմին՝ Ծիծեռնակաբերդում նախատեսվող սպորտի պալատի շինարարության կապակցությամբ վերանայել եղեռնի կոթողի տեղադրման հարցը: Հուշարձանը կիսավարտ վիճակում բացվեց 1967թ. նոյեմբերի 29-ին՝ Հայաստանի խորհրդայնացման 47-րդ տարեդարձի օրը, ինչպես ընդունված էր խորհրդային տարիներին՝ ամեն նշանավոր կառույց շահագործման հանձնել այդ օրը, այն կապելով հայ ժողովրդի վերածննդի հետ: Ժամանակին լերկ բլուրում համատարած ծառատունկը և յուրաքանչյուր նորատունկ ծառի ու քփի հանդեպ հոգատար վերաբերմունքը հնարավորություն տվեց տարածքը դարձնել փարթամ անտառ: Այդ տարիների երիտասարդները, հատկապես ուսանողներս, շատ ոգևորված էին օձ ու կարիճների բնակատեղի Ծիծեռնակաբերդի ամայի քարաստանները այգու վերածելու հայրենասիրական առաքելությամբ: Եվ կանաչապատումն ու շինարարությունը համատեղ ընթացքով ստեղծեցին այն, առանց ինչի մեր քաղաքի դիմապատկերից կբացակայեր չափազանց կարևոր մի երևույթ՝ եղեռնի հուշարձանը, որը կառուցման տարիներից սկսած դարձավ մեր ժողովրդի ամենազվախավոր ուխտավայրերից մեկը:

Համաժողովրդական միջոցառման պատրանք ստեղծող մայիսմեկյան և հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակին նվիրված շքերթերի մասնակիցները ադմինիստրատիվ տույժի հեռանկարից սարսափահար՝ տարվա մեջ երկու անգամ «հոծ շարքերով», հիմնարկ ձեռնարկությունների ղեկավարների, կուսակցական ու կոմերիտական կազմակերպության ներկայացուցիչների, արհկոմիտեների նախագահների հսկողությամբ Հանրապետության հրապարակ էին գալիս (այն ժամանակ՝ Լենինի հրապարակ), կառավարական տրիբունայի առջևից անցնելիս անպայման արձագանքում հրապարակում հնչող «կեց-ցեներին և ուռռաներին» ու պարտադրված կեղծ տոնից ազատված, արևահար ու հոգնած ազատ շունչ քաշում, երբ իրենց շարասյունը վերջապես դուրս էր գալիս հրապարակի տարածքից:

Եղեռնի հուշարձանի բացումը ազատ կամքի դրսևորման մեր առաջին հնարավորությունը եղավ խորհրդային տարիներին. Ուզում ես գնա, չես ուզում՝ կարող ես չգնալ... Եվ սկսվեց ու զնալով առավել ահագնացավ մեր կամքը՝ այդ օրը անպայման լինել նրանց հետ, ովքեր եղեռնի էին ենթարկվել միայն այն բանի համար, որ հավատացել են նրան, ով ևս խաչին բարձրացավ՝ հանուն իր դավանանքի:



Հիմա ծայրահեղության աստիճանի անհեթեթ կթվա ասելիքս ու անհավանական, եթե ասեմ, որ հուշարձանի բացումից հետո հատկապես առաջին տարիներին ապրիլի 24-ին եղեռնի հուշարձան բարձրացողների մեջ բացակայում էին պետական պաշտոնյաները, ղեկավար անձինք...

Առաջին անգամ պետականորեն եղեռնի օրը նշվեց 1975 թվականին: Ժողովրդի հետ եղեռնի հուշարձան բարձրացման կենտկոմի քարտուղարները, պետության ղեկավարները՝ 60-ամյակի առիթով: Այդ օրը առաջին անգամ հանրապետության ողջ տարածքում հայտարարվեց լռության րոպե՝ տեղական ժամանակով ժամը 19.00-ին, որը հետո ավանդական դարձավ: Առաջին անգամ հեռուստատեսությամբ հանդես եկավ երկրի առաջին դեմքը՝ Կարեն Դեմիրճյանը: Իսկ եղեռնի զոհերի հիշատակին կառուցված համալիրն ամբողջացավ 1995 թվականին՝ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կառուցմամբ:


Մի քանի խոսք համալիրի այն կառույցի մասին, որը, ըստ նախագծի, պետք է խորհրդանշեր Հայաստանի վերելքը խորհրդային տարիներին: Սակայն մենք մենք չէինք լինի, եթե նման հուշակոթողում դրա մեջ ևս իմաստ չդնեինք՝ առաջին հայացքից չնկատվող, բայց շատ կարևոր...

Ապրիլի 24-ին, երբ կլինես Ծիծեռնակաբերդում, առավել ուշադիր նայիր դեպի երկինք խոյացող սլաց-քայունին և կնկատես, որ այն երկու գագաթ ունի՝ մեկը ավելի բարձր, մյուսը՝ մի փոքր կարճ:

Կարծում եմ՝ քո երևակայությունը կօգնի քեզ Արարտի ֆոնին նկատել Արարատների յուրօրինակ մեկնաբանությունը, որը ժամանակին մեծ համարձակություն էր պահանջում:

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

Construction of the memorial began in 1966 (during Soviet times) in response to the 1965 Yerevan demonstrations during which one million people demonstrated in Yerevan for 24 hours to commemorate the 50th anniversary of the Genocide. The memorial is designed by architects Arthur Tarkhanyan, Sashur Kalashyan and artist Hovhannes Khachatryan.[4] It was completed in November 1967.





ՏՐԱՊԻՉՈՆ, ՕԳՈՍՏՈՍԻ 8...

Օտար հեղինակների կողմից եղեռնի լուսաբանման նյութերի որոնման նպատակով թերթում էի սփյուռքահայ մամուլը, երբ Բուխարեստում լույս տեսնող «Հայ մամուլ» շաբաթաթերթի 1942 թվականի ապրիլի 26-ի համարում հանդիպեցի ժան Բարթի «Նավատախտակամածի օրագիր» հուշագրության մի հատվածի, որը ներկայացնում ենք ստորև: Գողվածը հետաքրքիր էր նաև այն նկատառումով, որ հուշագրության հիշյալ հատվածի թարգմանության հեղինակի՝ Պուքրեշտի (Բուխարեստի) լիցեյի աշակերտի անունը ծանոթ թվաց: Ինչպես պարզվեց՝ զուգահեռաբար պատահական չէր: Թարգմանության հեղինակը՝ 18-ամյա Յակոբ Առաքելյանը, նույն ինքը՝ 1948-ին հայրենիք ներգաղթած, ԵՊԲԳ լատիներեն և օտար լեզուների ամբիոնի վարիչ (1960-1996), այնուհետև՝ նույն ամբիոնի դոցենտ (1996-2007) Դակոբ Առաքելյանն է, ով ևս կիսել է եղեռնից մազապուրծ ընտանիքի անդամի ճակատագրի ողջ ծանրությունը:

Մի քանի հարյուր մետր հեռավորության վրա ռուսական մի ռազմաճակատի խարխուս է նետել: Հագիվ կարելի է կարողալ ռուսերեն տառերով «Կուբանեց» անվանումը: Ռազմաճակատը ուղարկված է համիդյան կոտորածներից պաշտպանելու Անատոլիայի քրիստոնյաներին: Ըստ ընդունված կարգի՝ մեր նավահանգիստ ժամանելու հաջորդ օրը, ռուսական զրահամավի հրամանատարը պետք է այցելեր մեր հրամանատարին, բայց հարկ չհամարեց: Դրա հետևանքով ռուս սպաների և մեր միջև սառնություն առաջացավ:

Հետևյալ օրը զորույն ենք ցամաք ելնել, որ քաղաք այցելենք: Ֆետը ծոծրակին, մերկ վզով և արևակեզ մի թուրք մակույկավար մեզ ծովափ է հանում: Քարափին հավաքված բազմությունը մեզ է նայում, իսկ ոմանք մեզ ցույց տալով բացատրում են, որ «վահիկա» ենք:

Քայլում ենք ոլորապտույտ ու կեղտոտ փողոցներով: Բարձր, սևացած և ժամանակից մաշված պատերի հետևում հագիվ երևում են երկաթյա նիզերով փակված ու թանձր վարագույրներով քողարկված պատուհաններով տները: Դժվարությամբ անցնում ենք կեղտոտ, նեղ նրբանցքներով, խանդավառ անբոխի միջով:

Լռակյաց ու անհոգ թուրքերը ջշում են դանդաղորեն շարժվող ջորիները, լեզվանի հույներն իրենց ապրանքները գովելիս մեզ խլացնում են, ճերմակ և լայն փաթթոցներով արաբները դանդաղ քայլում են խաղաղաբար ուղտերի կողքով, գունատ, հաստ հոնքերով, խորափափանց աչքերով հայերը մեզ են զննում, խորամանկ ու ընչաքաղց հայացքներով պարսիկները ցուցադրում են իրենց գորգերի

չքեղությունը: Սենք կանգ ենք առնում մեր դրամները թուրքականով փոխանակելու համար: Մեզ հետևող լամուկների բազմությունը շրջապատում ու ազահ հայացքով նայում է ոսկու փայլին: Մի քանի ավելի համարձակներ սկսում են մեզ հետ խոսել ու թարգմանչի դեր ստանձնել, քանի որ նրանցից ոմանք սովորում են այստեղ ևս հիմնավորված «ճիզվիթների» դպրոցներում ու փոքր ինչ ֆրանսերեն գիտեն:

Քաղաքում լուրջություն է տիրում: Հայերի կոտորածից հազիվ մի ամիս է անցել: Յուրաքանչյուր քայլափոխի հանդիպում ենք թաղեթաղ շրջող, կրծքները փամփշտակված խաչածևած, զենքերը կրակելու պատրաստ պահած պահակախմբերի: **Փողոցների անկյուններում տեսնում ենք թխադեմ, միհար, կեղտոտ ցնցոտիներով երեխաների խմբեր, որոնք մուրում են, անցորդներին ձեռք մեկնում: Այս սովահար ու մերկ փոքրիկները թուրքերի վայրագ ոճիրների զոհերն են, այս որբերի ծնողները նահատակվել են անմեղության սեղանին: Խեղճերը իրար հրիբելով կռվում են, ձեռքից ձեռք խլում մեր տված փողերը, որպեսզի հաց գնեն: Բրդյա գուլպա վաճառող մի հայ պառավ աղավաղված ֆրանսերենով պատմում է կատարված խժոժությունների մասին, թե ինչպես մտտակա գյուղերի թուրքերը հավաքվեցին ու սրբորով ներխուժեցին քրիստոնյաների տները, ինչպես տների շենքերին և եկեղեցիների աստիճանների վրա դաշունահարեցին հայերին ու փողոց նետելով՝ պղծեցին նրանց անշնչացած դիակները: Երեխաներին խնայեցին՝ ասելով, թե «սրանք Ալլահին ծառայելու են հավատարմությամբ ու խոնարհությամբ»: Փրկվեցին միայն նավահանգստում կառանված օտարերկրյա նավերում ապաստանածները:**

Պատմելիս խեղճ պատավի ծայրը խեղճվում է, ցավագին հառաչանքներով հագիվից զսպում է հեկեկոցը և հագուստի թեթև սրբուն թռչնած դեմքի վրայից մինչև սուր կզակը հասնող արցունքի կաթիլները:

Նայում և պրպտող հայացքով ջանում են խանութների շենքի անհոգ ու խաղաղ այս **կիրթ** (ընդգծումն ինձ է: Ա.Թ.) թուրքերի անխռով, խոհուն դեմքերին գազանության թեկուզ նշույլ գտնել:

Ուշ երեկոյան, երբ նավ ենք վերադառնում, մի մոլլա՝ մզկիթի մինարեից ձեռքերը երկինք կարկառած, հավատացյալներին աղոթքի է կանչում: Նրա լալկան երգը կորչում է քաղաքի հանդիպակաց բլրի լանջին գտնվող եկեղեցու զանգի ղողանջի մեջ: Հավատացյալներին աղոթքի հրավիրող սուրբ հավատի մոգականությամբ ներշնչված մոլլայի սփռած՝ մարգարեի այսչափ իրապաշտ կրոնը ականա համեմատում են եկեղեցու կոշնակի բանական ու տրամաբանական ազնիվ խորհրդի հետ, որը երևակայությունը մղում է դեպի ժամանակին հոգու աչքերին հայտնված անենավեհ ու նվիրական երազը՝ գրավիչ, հրապուրիչ երազը, հանուն որի ամբողջ կյանքի ընթացքում տառապեց ու խաչի վրա զոհվեց մազարեթքի աստղծագործի ազնիվ զավակը:

Հ.Գ. Ես երկար որոնեցի հուշագրության հեղինակի ինքնության մասին որևէ տեղեկատվություն, սակայն չգտա: Համացանցի էջերում հանդիպեցի ժան Բարթի անվամբ մեկին, ով սակայն նույն անձը լինել չէր կարող. քանի որ նա գործել է 1600-ական թվականներին, եղել Ֆրանսիայի Ազգային հերոս:

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

Մոտենում է 2015-ը՝ Հայոց Եղեռնի 100-ամյա տարելիցը

Ասում են՝ 100 տարի անց վաղեմության ժամկետը կորցրած է համարվում ցանկացած հանցագործություն:
Ո՞վ է ասում: Մենք 100 տարեկան չդարձանք: Մեր կորսված մանկության վրեժը երբեք չպետք է խամրի:
Մեզ հիշող մեր հասակակիցները պետք է մեծանան այն մտայնությամբ, որ իրենք ապրում են
մեր փոխարեն և, և մեր արցունքի յուրաքանչյուր կաթիլը պետք է ծանրանա նաև նրանց հոգիներին,
եթե չհիշեն մեզ, երբ հասուն մարդիկ դառնան...
Մեր կորցրած մանկությունը պահանջում է, մեր կորցրած մանկությունը դատապարտում է ...



The Genocide had begun. Whole populations of villages were taken together and set fire to. "The shortest method for disposing of the women and children concentrated in the various camps was to burn them".

Նորաստեղծ ստորաբաժանում՝ միավորման արդյունքում

Մեր հյուրն է գիտական գործունեության համակարգման բաժնի պետ Սեյրան Քոչարյանը



Գիտական գործունեության համակարգման բաժնից երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանում է և, որպես այդպիսին, նորաստեղծ է: Բաժնի գործունեության հիմքում հիմնականում ընկած են նախկին գիտակազմակերպչական և գրանտային ծրագրերի համակարգման բաժինների գործառույթները, որոնց միաձուլմամբ էլ նախորդ տարեվերջին համալսարանի ռեկտորի հրամանով ձևավորվեց գիտական գործունեության համակարգման բաժինը:

- Քանի որ բաժինը նորաստեղծ է, մեզ հետաքրքրում է, թե որո՞նք են նրա գործունեության բնագավառները:

- Բաժնի գործունեության բնագավառները կարելի է դասակարգել 3 հիմնական ճյուղերով՝

- համալսարանի գիտական գործունեության, հետազոտական, գիտակլինիկական և փորձարարական աշխատանքների կազմակերպում,

- համալսարանի ստորաբաժանումների և աշխատակիցների ներգրավում բժշկագիտության ասպարեզի դրամաշնորհային ծրագրերին, ինտեգրում՝ միջազգային համագործակցությանը,

- գիտական կադրերի պլանավորման, պատրաստման, որակավորման և ատեստավորման ծրագրերի կազմակերպում և իրականացում:

Եթե մանրամասն ներկայացնենք այս բնագավառներից յուրաքանչյուրը՝ ակնհայտ կլինի, որ դրանք սերտորեն կապված են, կարելի է ասել՝ լրացնում են միմյանց, իսկ մեր կողմից կատարված բաժանումը կրում է զուտ պայմանական բնույթ:

- Իսկ ո՞րն է ձեր ղեկավարած օղակի գլխավոր նպատակը:

- Մեր բաժնի գլխավոր նպատակը բխում է վերոնշյալ գործառույթներից, այսինքն՝ այն գիտական, գիտահետազոտական և գիտակազմակերպչական գործունեության, գիտամանկավարժական կադրերի պլանավորման, պատրաստման և որակավորման գործընթացի, միջազգային գիտական համագործակցության զարգացման, ինչպես նաև հետազոտությունների կառավարման ծրագրերի կազմակերպումն ու իրականացումն է:

- Ինչպիսի՞ խնդիրներ է իրականացնում բաժինը:

- Փորձեն թվարկել բաժնի կողմից իրականացվող խնդիրները հնարավորինս համառոտ ձևով: Դրանք են՝

- բժշկական համալսարանի ստորաբաժանումների գիտահետազոտական, գիտակլինիկական և փորձա-

րարական աշխատանքների կազմակերպում և համակարգում,

- գիտական միջոցառումների կազմակերպում և մասնակցության ապահովում,

- գիտակորդինացիոն խորհրդի, փորձագիտական հանձնաժողովների, երիտասարդ գիտնականների խորհրդի և ուսանողական գիտական ընկերության աշխատանքների կազմակերպում և աջակցություն,

- մրցունակ գիտական նախագծեր կազմելու, մրցույթների մասնակցության կազմակերպում և աջակցություն,

- ՀՀ պետական բյուջեից և այլ ֆոնդերից ֆինանսավորվող ծրագրերի կատարման գործընթացի համակարգում,

- գիտական կադրերի պատրաստում և որակավորում՝ ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի և հայցորդության միջոցով,

- դրամաշնորհային ծրագրերի փնտրում և հայտերի ներկայացում,

- գիտական գործունեության մասին տեղեկատվական հոսքի կառավարում:

- Ի՞նչ մեթոդներ են կիրառվում բաժնի առջև դրված նպատակներին հասնելու համար:

- Համալսարանի ղեկավարության կողմից բաժնի առջև դրված նպատակներին հասնելու համար մենք ընտրեցինք տեղեկատվական հոսքի կառավարման արդի ամենահզոր գեները՝ ինտերնետը: Մեր աշխատանքը սկսվեց համալսարանի պաշտոնական կայքէջի «Գիտություն» բաժնի վերակառուցմամբ, որտեղ մատչելի կերպով ներկայացված են համալսարանում գործող մասնագիտական խորհուրդները, գիտակորդինացիոն խորհուրդն իր բոլոր հանձնաժողովներով և էթիկայի կոմիտեով, գիտակազմակերպչական և դրամաշնորհային գործունեությանը վերաբերող տեղեկատվություն, անհրաժեշտ ձևաթղթեր և գործող կարգեր:

Մանրամասնորեն ներկայացված է գիտական կարգերի պատրաստման և որակավորման՝ ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի և հայցորդության համակարգի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն և ձևաթղթեր, որով շատ դյուրին է դարձել թե՛ համալսարանի անձնակազմի, թե՛ այլ մարդկանց համար ԵՊԲԳ գիտական օղակի վերաբերյալ տեղեկատվության ստացումը և իրենց կարիերային վերաբերող հարցերի պատասխանները գտնելը: Այս պահին դեռևս թերի է մնացել երիտասարդ գիտնականների խորհրդի և ուսանողական գիտական ընկերության գործունեությանը վերաբերող աշխատանքների արտացոլումը կայքէջում:

- Մենք տեղյակ ենք, որ ձեր բաժնի կողմից աշխատանքներ են տարվում կայքէջի ոչ միայն «Գիտություն», այլև «Տեղեկատվություն» բաժնում: Խնդրում են Ձեր պարզաբանումը այդ առնչությամբ:

- Իրավացի եք: «Տեղեկատվություն» բաժնում մեր կողմից ավելացվել են հետևյալ ենթավերնագրերը՝ «Դրամաշնորհներ», որտեղ տեղադրվում են բժշկագիտության ասպարեզի թե՛ հետազոտական և թե՛ գիտակրթական ակտիվ ծրագրերի վերաբերյալ հայտարարություններ, որոնց կարելի է տեղեկանալ նաև բաժանորդագրության միջոցով: Բավական է միայն գրանցվել՝ այցելելով նույն բաժնի «Բաժանորդագրվել» հղումը: «Առցանց ռեսուրսներ» ենթաբաժնում հնարավորություն է ստեղծվել ընթերցելու աշխարհում հրատարակվող առաջատար պարբերականներում տպագրված հոդվածները, քանզի այստեղ հասանելի են գիտաբժշկական տեղեկատվական բազմաթիվ ռեսուրսներ և ամսագրեր: Յետաքրքրական է նաև նույն բաժնում տեղադրված Ռուսաստանի Դաշնության, Բելոռուսի, Ուկրաինայի և Ղազախստանի առաջատար գիտաբժշկական պարբերականների հղումները, որտեղ մեր օգնությամբ կարող են հրապարակման նպատակով ներկայացվել գիտական հոդվածներ: Կարծում են՝ կարողացել ենք բավարարել գիտական աշխատանքներ կատարողների հետաքրքրությունները և պահանջները: Միաժամանակ տեղին է նշել, որ էլեկտրոնային կառավարման գործիքների մեջ մեր կողմից օգտագործվում են սոցիալական ցանցերի հնարավորությունները և էլեկտրոնային մամուլային տարբերակը:

- Ի՞նչ նորամուծություն է կիրառել բաժինը իր գործունեության այս ամիսների ընթացքում:

- ԵՊԲԳ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Մ. Նարինանյանի անմիջական ղեկավարությամբ գիտակորդինացիոն խորհրդի փորձագիտական հանձնաժողովների միջոցով համալսարանում իրականացվող հետազոտական աշխատանքների մեջ առանձնացվել են առաջնային համարվող գիտական ուղղությունները, որոնցում գիտական աշխատանքներ են իրականացնում ավելի քան 120 գիտաշխատող: Այդ թվում՝ տեսական ամբիոնների և գիտահետազոտական կենտրոնի աշխատակիցների մասնակցությունը կազմում է 65%, թե-

րալակտիկ մասնագիտություններինը՝ 16%, վիրաբուժականինը՝ 9%, ստոմատոլոգիական և զինեկոլոգիական մասնագիտություններինը՝ 5-ական տոկոս: Ինչպես երևում է բերված տվյալներից՝ համալսարանի ղեկավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում տեսական բժշկությանը, որն այսօր հոգածության կարիք ունի:

Չաջորդ մեծ խնդիրը, որը ծառայած է բաժնի առջև, ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ հետազոտողի համակարգի ներդրման վերաբերյալ հրամանի կատարումն է: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանում նոր կրթական բաղկացուցիչ է համարվում կրեդիտային համակարգը: Ասպիրանտները (առկա, հեռակա) և հայցորդները առաջին 3 տարվա ընթացքում համարվում են հետազոտողներ, որոնց համար կրթական և հետազոտական գործընթացի արդյունքում պարտադիր է 180 կրեդիտի ստացումը: Այս պահին բաժինը զբաղված է հետազոտողի դասատախտակի ստեղծմամբ:

Բաժնի կողմից ստեղծվել և օգտագործվում է ԵՊԲԳ գիտական կարգերի մասին տեղեկատվական բազա, որի սահմաններում պարբերաբար կատարվում են անհրաժեշտ ցուցանիշերի հաշվարկում՝ գիտական կարգերի պլանավորման և որակավորման աշխատանքների արդյունավետ իրականացման համար:

Գիտակորդինացիոն խորհրդի նիստերը այս տարի սկսվել և շարունակվելու են նոր ձևաչափով. յուրաքանչյուր նիստի սկզբում ելույթ են ունենում համալսարանի առաջատար հետազոտական ուղղությունների ղեկավարները, ովքեր ներկայացնում են մեր համալսարանում իրականացվող արդիական հետազոտությունների ձեռքբերումներն ու նվաճումները, միաժամանակ երիտասարդ սերնդի գիտնականներին ի ցույց դնելով գիտնականի իրենց փորձն ու հմտությունները՝ ինչպես աշխատանքի կատարման, այնպես էլ արդյունքների ներկայացման հարցում:

Նորամուծություն է նաև ԳԿԽ նիստերում ասպիրանտների և դոկտորանտների կողմից հաշվեկալիցությունների ներկայացումն ու քննարկումը՝ վերջիններիս կատարած աշխատանքի ընթացքի և ցուցաբերած ակտիվության վերաբերյալ:

Չամոզված են, որ համալսարանի ղեկավարության կողմից ընտրված գիտության կառավարման ռազմավարությունը և բաժնի առջև դրված խնդիրները տանում են միևնույն նպատակին՝ կարճ ժամանակում ձևավորել երիտասարդ գիտնականների մրցունակ հանրություն, որը պատրաստ կլինի հավասար պայմաններում համագործակցել արտերկրի գործընկերների, միջազգային հեղինակավոր ամսագրերի, ինչպես նաև առաջատար համալսարանների հետ, ինչն էլ լուրջ խթան կհանդիսանա մեր երկրում բժշկագիտության զարգացման համար:

**Չարցազրույցը վարեց
ԼԻԼԻԹ ՎԱՐՊԱՆՅԱՆԸ**



Մեր երախտագիտական հղումները բոլոր նրանց, ում շնորհիվ Երևանի՝ պլանով ամենահին փողոցը կվերագտնի իր տեսքը



Յուրաքանչյուր քաղաք ունի իր ամենասիրելի փողոցը, որի հետ են հիմնականում կապված նույն այդ քաղաքի լավագույն ավանդույթները, հիշողությունները, միջոցառումները:

Արևյան փողոցն ասես Երևանի առաջընթացի ու զարգացման յուրաքանչյուր փուլի վկան է: Հանրապետության հրապարակից դեպի Քանաքեռի սարավանդի ստորոտ է ձգվում այսօրվա Արևյան փողոցը՝ Երևանի գլխավոր զարկերակը: Այն մայրաքաղաքի ամենաբանուկ փողոցն էր և՛ ցերեկային, և՛ երեկոյան ժամերին. հանդիպումների, զնուններ կատարելու, զբոսանքի ու ժամանցի սիրելի վայր, որտեղ մի քանի տասնամյակ առաջ ցնցոտիներով մի ծերունի ծաղիկներ էր նվիրում այս փողոցով անցնող երիտասարդ աղջիկներին:

Ի դեպ՝ փողոցը 1869 թվականին, ի պատիվ Երևանի 1864-1869 թվականների նահանգապետ, զեներալ-մայոր Աստաֆևի կոչվեց Աստաֆևսկայա, բայց ժողովուրդը այն անվանում էր հայկական՝ Աստաֆյան տարբերակով: Քանի որ սա քաղաքի առաջին պլանավորված փողոցն էր, ապա ժողովուրդը «պլան» ասելով հասկանում էր Աստաֆյան փողոցը, իսկ «պլանի գլուխ» ասելով հասկանում էր, և միջև այժմ էլ այդպես է կոչում փողոցի ծայրին գտնվող Արևյան պուրակը, որտեղ տեղադրված է հաշատուր Արևյանի արձանը:

1906-1918 թվականներին Արևյան փողոցով է անցել Երևանի ձիաքարշը, իսկ 1933 թվականին՝ քաղաքի առաջին տրամվայը:

Ժամանակին, երբ հեռուստացույցն ու համակարգիչը «տնային բանտարկության» չէին ենթարկել մարդկանց՝ չափազանց ընդունված է եղել ոչ միայն կինո և թատրոն հաճախել, այլև ուղղակի ճեմել փողոցում, շփվել իրար հետ, տեսնել միմյանց, հաղորդակցվել...

Երևանի համար կենտրոնական ճեմուղին Արևյան փողոցն է եղել:

Արևյան փողոցը... Երևանի մասին ցանկացած փաստագրական ժապավենի վրա առաջին հերթին այս փողոցն է, և նրա հնագույն ու յուրօրինակ գեղեցկությամբ աչքի ընկնող շենքերը մեկը՝ մեր համալսարանի արժաթագմբեթ շինությունը: Ուստի Արևյան փողոցը նաև մերն է, հատկապես՝ մերը...

Հետագայում արդեն այս փողոցում էին իրականացվում համաքաղաքային փառատոների կենտրոնական միջոցառումները, հրապարակում կայացող շքերթերին այս փողոցով էին միանալու գնում մայրաքաղաքի բուհական շրջանի շարասյուները...

Մեր մտավորականներից, գրողներից, արվեստագետներից շատերի հուշերից հառնում է իրենց ապրած ժա-

մանակի շունչը, երբ Աբովյանով հանդարտ ու սեփական անձի գնահատման դրսևորմամբ քայլել են մեր ազգի մեծերը՝ գրողներ, դերասաններ, անվանի նկարիչներ, մեծանուն արվեստագետներ՝ մտերիմ մարդկանց ընկերակցությամբ, իրենց հետևից քայլող հետաքրքրասեր երիտասարդների հայացքների ուղեկցությամբ:

Նրանցից յուրաքանչյուրը կուռք էր: Իսկ կենդանի կուռքին տեսնելու դժվարություններ կարծես թե չկային: Ուղղակի հարկավոր էր համբերել մինչև ամառային տոթը իր տեղը զիջեր հովասուն երեկոյին, և Աբովյան փողոցը հնարավորություն կտար երիտասարդներին քայլել իրենց կուռքերի հետևից՝ երջանիկ, որ ոչ միայն տեսան, այլև հնարավորինս լսեցին նրանց զրույցներից իրենց հասած պատառիկները:

Թվում է՝ այսօր այդ ամենը ծիծաղելի կարող է հնչել մեր երիտասարդության համար: Սակայն նայեցեք Աբովյան փողոցով «քայլող» Ավետիք Իսահակյանին, խոսքս, իհարկե, արձանի մասին է, պատկերացրեք նրա կողքին իր ժամանակակիցներին, փորձեք պատկերացնել որևէ հարցի մասին նրանց վերլուծություն-քննարկումները, այդ առիթով մեր պատկառազու մտավորականների գնահատականները և, համոզված եմ, կյանքի այն դասերը, որ տրվում էին Աբովյանով ճեմելիս, բնավ ավելորդ չէին լինի անգամ այսօրվա երիտասարդության համար:

Այս փողոցի սալահատակին են ոտնաձայներ թողել Ավետիք Իսահակյանը, Յովհաննես Թումանյանը, եղիշե Չարենցը, Երվանդ Քոչարը... մեր ազգի բոլոր մեծերը:

Ես լավ եմ հիշում Աբովյան փողոցի մերօրյա ավանդույթներից մեկը: Ամեն օր նույն ժամին Յովհաննես Շիրազը հայտնվում էր Աբովյան, Ամիրյան, Տերյան փողոցների խաչմերուկում՝ գլխին հավաքելով իր տաղանդի երկրպագուներին...

Սակայն ստացվեց այնպես, որ, ինչպես հիմա ընդունված է ասել՝ Երևանի «բրենդը» արժեզրկվեց՝ վերածվելով արևելյան երկրների շուկա հիշեցնող «բութիկների» շարքի: Զբավարարվելով փողոցի երկու կողմերի շենք-շինություններով՝ Աբովյան փողոցի մայթերի կենտրոնական միջնագծով իրար հետևից կառուցվեցին առևտրական կենտրոններ: Եվ երեկոյան, երբ փակվում էին խանութները, Աբովյան փողոցն ամայանում էր, լռում, խեղճանում...

Թվում էր՝ մեր քաղաքի ամենակենտրոնական և ամենավաճառ հիշողություններով փողոցը անվերադարձ կորցրեց իր հնայքն ու արժեքը:

Բայց՝ ո՛վ հրաշք, նորընտիր երիտասարդ քաղաքապետը խոստանում է Աբովյան փողոցը վերադարձնել երևանցիներին, և ... վերադարձնում է: Պարզ է՝ ոչ առանց հանրապետության ղեկավարության օգնության:

Այս առիթով կայացված որոշումից 1-2 օր անց, առանց աղմուկ-աղաղակի քանդվեցին մայթերի կենտրոնական մասով կառուցված հսկայական ամրակուռ նորակառույցները՝ խանութներ, սրճարաններ...

Համոզված եմ՝ շատ շուտով բոլորովին նոր տեսքով, լայնահուն մայթերով, ավելացող կանաչ տարածքներով մեր սիրելի փողոցը կդիմավորի նրանց, ովքեր կքայլեն այն փողոցով, որտեղ դեռևս արձագանքում են մեր արժանապատիվ մտավորականների ոտնաձայները:

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ



ԵՊԲՅ ՈՒՒՆ-Ը 20 տարեկան է 2012-ը հորելյանական է Հայաստանի Հանրապետության առաջին ուսանողական խորհրդարանի համար

Ներկայացնում ենք նախկին խորհրդարանականներին



*Լուսինե Նավասարդյան: ԵՊԲՅ լավագույն
շրջանավարտներից մեկը: Ուսումնառության տարիներին՝
Մխիթար Չերացու անվան կրթաթոշակառու, բուժական
ֆակուլտետի ֆակուլտետային խորհրդի նախագահ, ԵՊԲՅ
ուսումնական խորհրդարանի ուսումնամեթոդական,
այնուհետև՝ լրատվական հանձնաժողովների նախագահ,
ապա՝ ուսանողական խորհրդարանի քարտուղար,
միաժամանակ՝ ուսանողական գիտական ընկերության
ակտիվ անդամ, չափազանց գիտակ, սիրալիր և
բարեհաճ անձնավորություն:
Ես այսպիսին գիտեմ Լուսինե Նավասարդյանին, ում
մասին ժամանակին «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԿԸ» գրել է: Վերջերս
ուրախությամբ բացահայտեցի, որ որպես կրթության
մախարախի տիկին նրա հետ վարած հարցազրույցում նույն
եզրակացությանն է հանգել նաև «ԱՐՄԵՆՊՐԵՍԻ»
թղթակիցը: Ստորև տպագրում ենք Արուսիկ Զախարյանի
հարցազրույցը մեր լավագույն շրջանավարտներից,
ամենակարևորը՝ Ուուս ամենակատիվ
ուսանողներից մեկի մասին:*

Ս.ԹՈՐՈՍՅԱՆ

«ԱՐՄԵՆՊՐԵՍԸ» մեր լավագույն շրջանավարտներից մեկի՝ ԵՊԲՅ բուժական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախկին նախագահի մասին

- Տղամարդը դժվարությամբ է կարողանում բարձունքների հասնել, երբ կողքին չի լինում կին, ով միշտ հասկանում է ու օգնում դուրս գալ անելանելի թվացող իրավիճակից: Եթե անգամ այս տեսակետը չի կարելի ընդհանրացնել բոլոր տղամարդկանց համար, այնուամենայնիվ, պարզ է՝ նրանց ճախրելու համար թևեր պարզևող կանայք սովորաբար մնում են ստվերում: Առանց որևիցե ֆեմինիստական շարժում սկսելու ակնկալիքի պետք է նշել, որ մեր տեսակետը դարձավ հանդգնույթ, երբ «Արմենպրես»-ը հանդիպեց և զրուցեց Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի տիկնոջ՝ Լուսինե Նավասարդյանի հետ:

Լուսինե, իրականում դժվար է լինել նախարարի կնոջ դերում:

- Տանը ես բացարձակապես չեմ զգում որևիցե տարբերություն կամ առանձնահատկություն, որ նա-

խարարի կին եմ: Մեր տանը գործում է ընդհանուր բանաձևը՝ ամուսին-կին-երեխաներ: Իսկ ահա դրսում պետք է նշել, որ շատ դժվար է: Դա կաշկանդվածության պատճառ է, քանի որ հաճախ աշխատանքի վայրում, երբ ցանկանում ես մի փոքր թուլանալ, ծիծաղել, միշտ հիշում ես, որ կողքից քեզ նայում են որպես նախարարի կնոջ:

- Ընդունված է կարծել, որ յուրաքանչյուր հաջողակ տղամարդու ետևում կանգնած է ուժեղ կին: Ձեր ամուսնու հաջողությունների քանի՞ տոկոսն եք «վերագրում» Ձեր ուժեղությանը:

- Այդ հարցին, կարծում եմ՝ պետք է ամուսինս պատասխանի (համեստորեն ժպտում է): Միայն մի բան հասցրել եմ նկատել, որ երբ ունենում եմ որոշակի խնդիրներ, ճգնաժամային պահեր, դա միանգամից տեսանելի է դառնում նրա պահվածքում: Հեռուստատեսությամբ ամուսնուս տեսնելիս միանգամից զգում

են, թե ինչպես է կոնկրետ իրադարձությունն անդրադարձել նրա վրա: Փոխվում է նրա դեմքի արտահայտությունը, որոշակի լարվածություն է սկսվում նկատվել: Կարծում են, որ հենց նմանատիպ պարագաներում են համոզվում, որ, իրոք, գտել են թո երկրորդ կեսին:

- Կարողանում եք Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի գործունեությանը հետևել քննադատի աչքերով:

- Միշտ դա մեր հարաբերություններում եղել է պարտադիր պայման: Կարծում են, որ մուլտիսկ իր կատարած ընտրության մեջ այդ հանգամանքը կարևոր տեղ է գրավել: Ես միշտ նայում են նրան քննադատի աչքով: Իր խոսքերով՝ իր առաջին քննադատը ես եմ: Իհարկե, թերություններ նկատելիս անպայման մատնաշում են դրանք: Կարծում են՝ իրեն դա օգնում է:

- Դուք բժիշկ եք, աշխատում եք ձեր մասնագիտությանը: Որքանով է պարոն Աշոտյանն օգնում Ձեզ:

- Ինչպես յուրաքանչյուր կնոջ համար, ինձ համար էլ չափազանց կարևոր է ունենալ այն գիտակցությունը, որ կարող ես հույսդ դնել կողակցիդ վրա: Ընդհանրապես, կնոջ աշխատելու մեջ մեծ է անուսինների դերը ցանկացած մասնագիտությանը՝ անկախ անուսինը նախարար է, թե ոչ: Ուրախ եմ, որ նա կարողանում է ընտանիքում ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ կարողանամ հանգիստ աշխատել:

- Իսկ Դուք կցանկանայի՞ք լինել կրթության նախարար: Ի՞նչ փոփոխություն կիրականացնեիք այդ պաշտոնում:

- Ոչ, չէի ցանկանա, քանի որ շատ բարդ աշխատանք է: Ես տեսնում եմ, թե նա ինչքան կարոտ ունի իր երեխաների, ընտանիքի նկատմամբ: Չունի շաբաթ-կիրակի, հանգստյան օրեր: Տան կինը, մայրը չի կարող այդ ռեժիմով աշխատել: Իսկ փոփոխության մասին պետք է նշեն, որ իր աշխատանքից, իրականացվող բարեփոխումներից քիչ են տեղյակ: Մենք տանը աշխատանքային ոչ մի հարց չենք քննակում:

- Ընդունված է կանանց համարել թույլ սեռի ներկայացուցիչներ: Որքանով եք համամիտ այդ բնութագրմանը:

- Համամիտ եմ այդ գաղափարին, քանի որ իրականում կինը թույլ է: Իհարկե, կան ուժեղ կանայք, ովքեր կարողանում են կարևոր որոշումներ կայացնել, դժվարին իրավիճակից դուրս գալու ուղիներ գտնել:

- Մարտի 8-ից ապրիլի 7-ն ընկած ժամանակահատվածը սովորաբար ընդունում ենք որպես լավագույնը կանանց կյանքում տարվա ընթացքում, քանի որ տղամարդիկ ավելի ուշադիր են և բարեհամբույր: Ինչքանով է Ձեր ինքնագագադողությունը փոխվում այդ շրջանում:

- Չեմ ասի, որ ամբողջովին մույնն է և չի փոխվում, բայց եթե ասեն արտասովոր փոփոխություն են գզում, դա էլ սխալ կլինի: Հեռուստատեսությունը,



Ի՞նչ է պետք կնոջը երջանիկ լինելու համար: Նայելով այս լուսանկարին կարելի է պատասխանել՝ համոզմունք, որ ինքը երջանիկ է: Լուսինեի հայացքում ծովացած զգացումը վկայում է այդ մասին:

Ս.Թ.

ցուցափեղկերն են ավելի շատ տոնական մթնոլորտ ստեղծում:

- Ինչպիսի՞ նվերներ եք նախընտրում ստանալ:

- Իրականում նվերներ ստանալ շատ եմ սիրում: Իսկ Արմենի նվիրած նվերները միշտ յուրահատուկ են և հետաքրքիր: Ծաղիկներ ստանալ ևս շատ եմ սիրում:

- Այժմ ինչի մասին է երազում Լուսինեն: Արմեն Աշոտյանը վերջին հարցազրույցներից մեկի ընթացքում նշել էր, որ երազում է աղջիկ ունենալու մասին:

- Նպատակներ չատ ունեն: Ապագայի պլաններում ես էլ եմ աղջիկ ուզում, քանի որ մայրը միշտ աղջիկ է ուզում ունենալ (ծիծաղում է): Հետաքրքիր է, որ դա ոչ թե ընդունում եմ, այլ զգում եմ: Ես միշտ կատակով ասում եմ, որ եթե իմանամ, որ զույգ աղջիկ կունենան, հենց հիմա էլ կունենան:

- Ո՞րն է ձեր շնորհավորանքի խոսքը հայ կանանց:

Ցանկանում եմ, որ բոլոր հայ կանայք լինեն իրենք իրենց մեջ հաշտ ու համերաշխ, ինչը ես ներդաշնակություն են անվանում: ցանկանում եմ, որ իրենց զգան լիարժեք ու սիրված և միշտ ժպտան:

- Դուք մադթում եք հոգեկան ներդաշնակություն: Իսկ ինքներդ ունե՞ք Ձեր երկու «ես»-երին հաշտեցնելու խնդիր:

- Վտանգավոր հարց եք տալիս (ծիծաղում է): Երբեմն լինում են վեճեր, սակայն, իմ կարծիքով՝ դա առաջընթացի գրավականն է՝ հակառակ դեպքում ես չեմ ապրի, եթե իմ մեջ որոշակի դրվագներում չունենան պայքար, կկարծեմ, որ չեն ապրում, այլ գոյատևում են, երբ ասեն ինչ սկսում է գոհացնել. ապրել նշանակում է ձգտել ու հասնել՝ հաճախ հակամարտությունների հաշվին:



Ձյունոտ գագաթների կանչին ունկնդիր...

Մի քանի տարի առաջ «Հատիսի» մասին շատ էինք գրում: Յուրաքանչյուր արշավից վերադառնալուց հետո արևախանձ դեմքերով տղաների ու աղջիկների մի փոքրիկ պատվիրակություն խմբի անունից գալիս էր խմբագրություն՝ լրատվությամբ ու հրաշալի լուսանկարների մի պատկառելի տրցակով զինված: Նրանց ոգևորված տպավորությունները լսում էի հետաքրքրությամբ, և ողջ ընթացքում մտածում՝ այդ ի՞նչ ուժով է բժշկականի փափկակենցաղ ուսանողներին գրավում դեպի վրանային արշավը՝ տարվա ոչ միայն տաք ամիսներին «Հատիս» ակումբի անխոնջ ղեկավար: Եթե տղաների առնչությամբ դեռ կարելի էր բացատրություն գտնել, ապա աղջիկների դեպքում... Եթե սրան ավելացնենք նաև արտասահմանցի ուսանողների մասնակցությունը «Հատիսի» արշավներին՝ պատկերն ավելի խտուն կլինի:



Առաջին արշավը 1982-ի մարտի 2-ին էր: Այնուհետև 30 տարի՝ արշավներ, հավաքներ, հանրապետական մրցումներ... Արդյունքում՝ մի քանի տասնյակ մրցանակներ, գավաթներ, պատվոգրեր, պատվավոր հորիզոնականներում՝ միայն 1-ին և 2-րդ կարգեր:

ՀՀ սպորտի վարպետ, ավագ հրահանգիչ Մարտին Մարտիրոսյանը 2001 թվականին նախաձեռնում է համանուն փրկարարական ջոկատի ստեղծումը, որի գործունեության մասին ևս հետաքրքիր

լրատվությամբ բազմիցս հանդես է եկել բժշկական համալսարանի տարեգիրը: Այս ջոկատի գործունեության գնահատականը նույնպես հանրապետական մրցույթների արդյունքում չափազանց բարձր է եղել, քանի որ բացի փրկարարական գործունեություն ծավալելուց բժշկական համալսարանի փրկարար ջոկատի անդամները նաև բավականին բարձրակարգ առաջին բժշկական օգնություն իրականացնելու հնարավորություններ են ունեցել՝ ելնելով մասնագիտության ընձեռած հնարավորությունից: Օրինակը՝ Ջրվեժի մի խումբ դպրոցականների մոլորվելու դեպքը, ում առաջինը հայտնաբերեցին հատիսականները, Հատիս բարձրացող այլ խմբերի վնասվածք ստացած անդամներին ցուցաբերված օգնությունները....

Կու կարևոր թվեր են, քանի որ խորհարդանշում էին «Հատիս» բժշկափրկարարական խմբակի 30 և նույն խմբակի ղեկավար Մարտին Մարտիրոսյանի 60- ամյակները:

Շուրջ մեկ ամիս «Հատիս» խմբակի անդամները նախապատրաստական աշխատանքներ էին տանում, և վերջապես եկավ սպասված օրը: Ամեն տարի մարտի 1-ին, իրենց սիրելի ղեկավարի ծննդյան օրը, հատիսականներն առավոտ վաղ, պարտաճանաչորեն հավաքվում են՝ շարժվելու դեպի Հատիս լեռ: Սակայն այս տարին մի փոքր տարբերվեց: Կրկին հավաքվել էին 4 սերնդի ներկայացուցիչներ, սակայն այս անգամ ոչ թե ուսապարկերով ու արշավին համապատասխան հագուստով, այլ հանդիսավոր ու տոնական հագնված, «Վասպուրական» ռեստորանում՝ մշելու իրենց այդքան հարազատ խմբակի 30 և իրենց համար շատ սիրելի և կրկնակի հարազատ Մարտին Մարտիրոսյանի 60- ամյակները:

«Յուրաքանչյուրը կարող է իրեն համարել ղեկավար, սակայն լավ ղեկավարը նա է, որ կարող է 30 տարի շարունակ համախմբել տարբեր բնավորության տեր մարդկանց, կարողանալ ստեղծել առողջ ու մտերմիկ միջավայր»,- խմբագրությանը հղված հոդվածում նշում է ընդհանուր բժշկության ֆակուլտետի 6-րդ կուրսի ուսանողուհի, «երդվյալ հատիսական» Սաթենիկ Էլոյանը:

Մարտին Մարտիրոսյանը ավարտել է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի կենսաքիմիական ֆակուլտետը:

1981-82 թթ. աշխատել է Երևանի քաղաքային տուրիստական ակումբում՝ որպես հրահանգիչ և համատեղ աշխատել ԵՊԲՅ ֆիզդաստիարակության ամբիոնի մարզական ակումբում: 1982թ. հոկտեմբերից մինչև օրս աշխատում է նույն ամբիոնում՝ որպես դասախոս: Ունի 1 գիտական աշխատանք: 1985-ին ստացել է մարզական տուրիզմի կրտսեր, իսկ 1997-ին՝ ավագ հրահանգիչի կոչում, 1996 թվականին՝ մարզական տուրիզմից ԳՅ սպորտի վարպետի կոչում: 2001-ից մարզական տուրիզմի հանրապետական ֆեդերացիայի նախագահն է: 2007թ. պարզակատրվել է «Կուլեկտիվ անվտանգության երկրների» մեդալով, 2008-ին՝ Կուլեկտիվ անվտանգության երկրների 15-ամյակին նվիրված մեդալով:

Ունենալով ղեկավարի ճիշտ և առողջ մտածելակերպ, ընդլայնելով ակումբի գործունեության շրջանակները՝ հիմնադրել է բժկափրկարարական ջոկատը: Ինչպես ցանկացած նորածին, մեր «Յատիսն»-ն էլ իր առաջին քայլերն արել է դժվարությամբ, ունեցել է հաղթանակներ, հիասթափություններ, վերելքներ և վայրէջքներ, սակայն ցանկացած պարագայում հավատարիմ է մնացել իր ավանդույթներին: Այս 30 տարիների ընթացքում հարյուրավոր մարդիկ են անցել խմբակով՝ շփվել Մարտին Թաթոսիչի, կամ ինչպես սիրով կոչում ենք՝ «Թաթոսիչ ջանի» հետ: Նա կարողացել է համախմբել տարբեր բնավորության տեր մարդկանց, կարողացել է յուրաքանչյուրիս մեջ ամրապնդել սերը դեպի բնությունը: Ինչպես ցանկացած ծնող՝ մեր ղեկավարն էլ ուրախացել է խմբակի հաջո-



Նախկին հատիսականները արշավներից մեկին եկել էին ընտանիքներով:

ղություններով, տխրել, բայց ոչ հուսահատվել՝ դժվարություններից: Արդյունքում՝ «Յատիսն» ունի գեղեցիկ ավանդույթներ. գրեթե յուրաքանչյուր շաբաթ կազմակերպվում են արշավներ դեպի Հայաստանի տարբեր լեռնագագաթներ, սպասված են հատկապես յուրաքանչյուր ամառ գիշերակացով վրանային արշավները՝ մի քանի օր տևող ու դրանց ժամանակ կատարվող արարողությունները՝ խարույկ, կիթառ, գեղեցիկ երգեր, վրաններ, մեր իսկ ձեռքով պատրաստված կերակուր...

Սա մի կյանք է, որը քչերին է հարագատ, ու քչերն են, որ կարող են պատկերացնել դրա հմայքն ու հրապույրները: Կան հատուկ օրեր, որ նշվում են ամեն տարի: Ամեն տարի Ապրիլի 24-ին խմբակի անդամները կատարում են ուխտագնացություն դեպի Արայի լեռ, որտեղից հավաքված ծնծաղիկների փնջերով երեկոյան հասնում ենք եղեռնի կոթող, նման ձևով հարգանքի տուրք մատուցելով զոհերի հիշատակին: Յուրաքանչյուր տարի սեպտեմբերի 21-ին Արագածի գագաթին խմբի անդամները ծածանում են Հայոց եռագույնը: Գեղեցիկ ավանդույթ է դարձել նաև ղեկտեմբերի 31-ին Յատիսի գագաթին տարին փակելը, իսկ հունվարի 13-ին նույն գագաթից Նոր տարուն բարի գալուստ ասելը: Բացի Հայաստանի գեղեցիկ բնության հետ ծանոթանալուց՝ խմբակն ակտիվորեն մասնակցում է նաև տարբեր մրցույթների և միջոցառումների՝ ջանալով ամեն

գնով բարձր պահել մայր բուհի անունը և արժանանալ միայն բարձր մրցանակների»...

Իմանալով, որ «ԱՊԱԿԱ ԲԺՇԿԸ» պատրաստվում է «Յատիսի» հորելյանի առիթով հրապարակում տպագրել, ներկա, հատկապես նախկին հատիսականները խմբագրություն էին ուղարկել իրենց շնորհավորական հղումները և խնդրել դրանք անապաման տպագրել, որպեսզի թերթի այսօրվա ընթերցող-ուսանողներն իմանան, թե ինչից են իրենց գրկում, եթե ուսանողական տարիներին իրենց կյանքում տեղ չեն տալիս այն զգացողություններին, որոնք ոչ միայն հարստացրել են հատիսականների ուսանողական կյանքը, այլև ուղեկցելու են ողջ կյանքի ընթացքում:

Հնարավորություն չունենալով բոլորը տպագրել, վախենալով, որ ընտրության դեպքում կվիրավորենք ոմանց՝ որոշեցինք մեջբերել այն միտքը, որը ընդհանուր էր բոլորի մոտ. իրենց խմբակի անփոփոխ ու սիրելի ղեկավարին բարենաղթելով հորելյանի առիթով՝ ցանկություն են հայտնել «Յատիսի» 60-ամյակը բոլոր հատիսականների հետ մեկ Արարատի գագաթին...

Ս.ԹՈՐՈՍՅԱՆ



Ծնվել է 1971-ին: Գերազանցությամբ ավարտել է հանրակրթական դպրոցը: 1988-1994-ին սովորել և կարմիր դիպլոմով ավարտել է ԵՊԲՀ բուժական ֆակուլտետը: 2001-ին պաշտպանել է թեկնածուական թեզը: 2004-2005-ին աշխատել է ԱՄՆ-ում՝ Սան Ֆրանցիսկոյի համալսարանում (UCSF): 2007-ին պաշտպանել է դոկտորական թեզ: 2007-ից ղեկավարում է Նյարդաբանության ամբիոնը: ԵՊԲՀ գիտական խորհրդի անդամ է, թերապևտիկ մասնագիտությունների ցիկլային մեթոդական հանձնաժողովի նախագահն է, Հայաստանի Նյարդաբանական և Ալցհեյմերի ասոցիացիաների փոխնախագահն է: Հեղինակ է ավելի քան 80 գիտական աշխատանքների: Ամուսնացած է, ունի երկու դուստր: Եվ... նկարում է:



ԱՇԽԱՐՀԸ ԲԺՇԿԻ ԳՈՒՆԱՎՈՐՄԱՄԲ

Մեր հյուրն է Նյարդաբանության ամբիոնի վարիչ Հովհաննես Մանվելյանը

– Կարևորում ե՞ք բժշկի առնչությունն արվեստին:

– Ի տարբերություն այլոց, ովքեր բժշկությունը դիտում են որպես արհեստ, ես համոզված եմ, որ բժշկությունը ևս արվեստ է: Լավ բժիշկը անպայման բազմակողմանի զարգացած մարդ պետք է լինի: Դա է ապացուցում կյանքի փորձը, երբ հաճախ ենք հանդիպում բժիշկ-գրողների, բանաստեղծների, նկարիչների, երաժիշտների, երգիչների, դերասանների և այլն:

Կարծում եմ, որ մեր խնդիրն այսօր ոչ միայն երիտասարդներին բժշկություն սովորեցնելն է, այլև ճաշակ ձևավորելը և հոգևոր արժեքների հանդեպ հետաքրքրություն առաջացնելը:

Արվեստ պետք է լինի բժշկի յուրաքանչյուր քայլի մեջ՝ սկսած հիվանդի հետ առաջին շփումից մինչև նրա առողջացումը:

Ի դեպ՝ ԱՄՆ-ում կատարվել է մի շատ հետաքրքիր փորձ, երբ երեք բժիշկներ հիվանդներ ընդունելիս



խաղացել են համապատասխանորեն երեք դեր: Առաջինը հիվանդին ընդհատել է, սակայն տվել է ճիշտ ախտորոշում և բուժում: Երկրորդը հիվանդի հետ զրուցել է իմիջիայլոց: Երրորդը հիվանդին թույլ է տվել

խոսել մինչև վերջ, ցույց է տվել կարեկցանք, սակայն «ախտորոշել» է սխալ:

Արդյունքում՝ հիվանդների կողմից լավագույն բժիշկ է ճանաչվել երրորդը: Մի բան ևս ուզում եմ նշել. ԱՄՆ-ում ցանկացած բժշկական հաստատությունում հիվանդների համար կան բազմաթիվ գրքույկներ՝ հատուկ խորհրդատվություններով, ասենք՝ ինչպես ճիշտ ընտրել բժշկին: Այդ գրքույկներից մեկում վերարտադրվում են Ֆլորա Նայթինգեյլի խոսքերը՝ «Ուշադրություն դարձրեք բժշկի սենյակի պատուհանագոգի ծաղիկներին: Եթե դրանք խնամված են ու կանաչ, ապա բժիշկը հոգատար կլինի նաև իր հիվանդների նկատմամբ»:

– Զգացողություն, որը չէիք ցանկանա վերապրել:

– Դավաճանություն և հիասթափություն: Թվում է, թե բոլորս էլ խուսափում ենք այս երկուսից, բայց ինձ համար անտանելի ծանր է լինում կորցնել վստահությունը և հարգանքը մի մարդու հանդեպ, ում ես համարում էի ինձ հոգեհարազատ:

– Ամենաթանկ խորհուրդը, որը ստացել եք ձեր կյանքում: Ունի՞ց: Դեպք, որի մասին հիշողությունն ուղեկցել է ողջ կյանքի ընթացքում, որը օգնել է դժվարությանը նայել փիլիսոփայորեն...

– Ճակատագրի բերումով առիթ եմ ունեցել շփվել բազմատեսակ, տարբեր ազգերի, հավատքի, ռասայի պատկանող մարդկանց հետ և միշտ փորձել եմ հասկանալ նրանց մտածելակերպը, կյանքի արժեքվորման նրանց գնահատականները: Մի քանիսից ստացել եմ «մեծ դասեր» և հասկացել կարևոր մի ճշմարտություն՝ ամեն մարդու հետ խոսել իր լեզվով, չխուսափել և ոչ մեկից:

Մի քանի տարի առաջ մասնակցում էի կոնգրեսից հետո կազմակերպված մի հանդիպման՝ Վիեննայի քաղաքապետարանում: Այցեքարտիս վրա կարդալով

անունն և երկիրս՝ ինձ մոտեցավ մի բարեհամբույր, ալեհեր կին, որը մեծ հետաքրքրությամբ հարցրեց, թե ինչպես է հիմա կյանքը Հայաստանում, ինչպես է մեր ժողովուրդը կարողացել վերապրել ցեղասպանությունը: Ձրուցակցիս քաջատեղյակության առնչությամբ իմ զարմանքին ի պատասխան նա ասաց, որ Ավստրիայի դպրոցական ծրագրում Ֆրանց Վերֆելի (որը ի դեպ ազգությամբ ավստրիացի հրեա է) «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը պարտադիր ուսումնական ծրագրի մեջ է ներառված, և նա, որպես մանկավարժ ու քաղաքացի, մեծ կարեկցանքով է վերաբերում հայերին:

Հրաժեշտ տալիս սեղմեցի այդ կնոջ ձեռքը և նկատեցի ձեռքի ուժը և ափի կոշտուկները, որը հստակ խոսում էր նրա՝ ֆիզիկական աշխատանք կատարելու մասին: Միջոցառման կազմակերպիչներից մեկը մոտեցավ ինձ և հարցրեց, թե արդյոք հաճելի՞ էր իմ զրուցակիցը: Լսելով իմ դրական պատասխանը՝ նա ասաց, որ ես զրուցում էի Ավստրալիայի Գարիայի վերջին կայսեր թոռան հետ: Ես ասացի՝ բայց նա թագ չէր կրում: Ընկերս պատասխանեց. «Իհարկե, նա այսօր այստեղ որպես դպրոցի ուսուցչուհի էր եկել»: Չմայած



շատ տարիներ են անցել՝ ես մինչև հիմա հիշում եմ այդ պատմությունը ու իմ քաղած դասը՝ լինել հասարակ, ամուր կանգնած լինել գետնի վրա, սա է բարձրագույն արիստոկրատիզմը:

- Կարդալ հասցնում ե՞ք:

- Պետք է խոստովանեմ, որ շատ դժվար եմ գտնում այն գիրքը, որը գրավում է ուշադրությունս: Մասնագիտական ինքնակրթումը անվերջ և անընդհատ է, սակայն գեղարվեստական գրականության աշխարհում ուզում ես ստանալ քեզ հուզող հարցերի պատասխանները: Վերջերս նորից սկսեցի կարդալ Միշել դը Մոնտենի «Փորձերը»:

- Նկարելիս սիրում եք երաժշտություն լսել, ապրել վերհուշերով, թե՞ մտաբերում եք երեկվա կամ այսօրվա հիվանդին...

- Ընդհանրապես երաժշտություն շատ եմ սիրում լսել: Իհարկե՝ գերադասում եմ օպերային երաժշտությունը, այն էլ մեծն Մարիա Կալլասի կատարմամբ: Սերը դեպի օպերային արվեստը փոխանցվել է զավակներին, որոնք հաճույքով պատրաստ են ինձ հետ լսել «Տոսկա», «Լակմե», «Կարմեն»...

Նկարելիս սովորաբար կտրվում եմ արտաքին աշխարհից, ինչն էլ թույլ է տալիս ինձ իսկապես հանգստանալ առօրյա հոգսերից:

- Ի՞նչ ասել է տոն՝ ձեր ընկալմամբ:

- Իմ կարծիքով տոնի ընկալումը տարբեր տարիքներում էապես տարբերվում է: Երեխայի համար գունեղ փուչիկը և համեղ քաղցրավենիքը արդեն տոն է, դեռահասի համար ընկերներով ինչ-որ առիթով ճաշելը գուցե ևս տոն է: Տարեցի համար իր զավակների ուրախությանը մասնակցելն է տոն: Ինձ համար այդ ամենի կազմակերպումը կարող է տոնական զգացում առաջացնել, սակայն միշտ կողմնակից եմ առողջ և անվտանգ տոներին: Շատակերությամբ զբաղվելու փոխարեն կարելի է գնալ լողավազան, մարզադահլիճ...

- Հանգստի նախընտրած ձևը:

- Ես կարող եմ հանգստանալ և էներգիայով լցվել ինձ համար հաճելի մարդկանց հետ շփվելիս, ճանապարհորդելիս, երաժշտություն լսելու կամ գիրք կարդալու ժամանակ, ցանկացած այն դեպքում, երբ կտրվում եմ առօրյա ծանրաբեռնվածությունից: Նշեմ, որ, այսպես կոչված՝ «պասիվ» հանգիստը ինձ համար չէ:

- Ձեր նախընտրած գույնը: Ինչո՞ւ հատկապես այդ գույնը:

- Բոլոր գույներն էլ սիրում եմ, սակայն կան գույների համակցումներ, որոնք առանձնակի հաճելի են, նույնիսկ՝ հարմոնիկ: Ինձ համար այդպիսին է մուգ կապույտի և վառ կարմիրի համակցումը, բայց պետք է հիշել, որ մի քանի հիմնական գույներից բացի գոյություն ունեն հազարավոր կիսատոներ, որոնց խայտաբղետ համակցությունից էլ ստեղծված է բնությունը, հետևաբար և կյանքը:

- Ձեր հղումը մեր երիտասարդ ընթերցողին:

- Եղեք ազնիվ ինքներդ ձեզ հետ: Եղեք ձգտող, դժգոհ մնացեք ձեր սեփական ձեռքբերումներից, ձգտեք ավելի բարձրին և կատարյալին: Փնտրեք և գտեք այն ներքին ներդաշնակությունը, որը թույլ կտա ձեզ հաճույք ստանալ ամենօրյա աշխատանքից: Համարձակ եղեք: Մի՛ վախեցեք անել քայլեր, որոնք կավելացնեն ձեր կյանքի փորձը և գիտելիքը: Փորձը միշտ բարորակ է:

- Շնորհակալություն հարցազրույցի համար: Ես միշտ հաճույքով եմ զրուցել մեր այն աշխատակիցների՝ հատկապես բժիշկների հետ, ովքեր մասնագիտական գիտելիքներից զատ իրենց հոգում բարձրի ու կատարյալի ձգտման կայծ ունեն, ովքեր ոչ միայն ճանաչում են կյանքը, այլ և սիրում այն, և իրենց ստեղծագործական գործունեությամբ աշխատում սիրելի դարձնել այն մասնորիշների համար:



Հարցազրույցը վարեց ՍԵՊԱ ԹՈՐՈՍՅԱՆԸ

ԻՆՏԵՐՆՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Ինտերնատուրայի կանոնակարգի պահանջներին համապատասխան բոլոր բժիշկ-ինտերնները, իրենց ղեկավարների օգնությամբ, երկրորդ կիսամյակում մասնագիտական հանձնաժողովներին են ներկայացնում կլինիկական դեպքերի վերլուծություններ, որոնցից ընտրվում են զեկուցումներ՝ կոնֆերանսին ներկայացնելու համար: Այս տարի հանձնաժողովների երաշխավորությամբ կոնֆերանսում ելույթ ունենալու իրավունք տրվեց այն տասներկու ինտերններին, ում աշխատանքներն առավել հետաքրքրական եւ ուշադրության արժանի համարվեցին:

Մարտի 27-ին տեղի ունեցած կոնֆերանսին մասնակցում էին հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետի դեկանը, ամբիոնների վարիչներ, դասախոսներ և ինտերններ: Բացման խոսքով ներկաներին ողջունեց

Համալսարանական թիվ 2 ստոմատոլոգիական պոլիկլինիկայի բժիշկ-ինտերններ Ֆ. Բոնաբը, Փ. Փուրշաբանը եւ Լ. Հովհաննիսյանը սլայդների օգնությամբ ներկայացրին իրենց կատարած աշխատանքներն ըստ էության:

«Հերացի» թիվ 1 կլինիկական հիվանդանոցի դեղագետ-ինտերն Ս.Մարտիրոսյանն ուսումնասիրել էր դեղատան աշխատակիցների կողմից հիվանդների ինքնաբուժման գործընթացի կառավարումը, որի վերլու-



հետբուհական և շարունակական կրթության աշխատանքների գծով պրոռեկտոր դոց. Մ.Ս.Բիշարյանը:

Այս տարի կոնֆերանսի մասնակիցները հանդես եկան երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն, քանի որ ինտերնատուրայում մասնագիտանում են նաեւ արտասահմանցիներ:


Ինչպես հայտնի է՝ սրտանոթային համակարգի հիվանդություններն իրենց տարածվածությամբ եւ մահացության ցուցանիշերով գտնվում են առաջին տեղում, ուստի կոնֆերանսն սկսվեց ինտերններ Ա. Խաչատրյանի, Ա. Թովիչյանի, Ս. Խաչատուրյանի, Ա. Գորոյանի, Ա. Ազարյանի զեկուցումներով, որոնք նվիրված էին սրտանոթային հիվանդությունների ուսումնասիրմանը:

Հետաքրքրությամբ ընդունվեցին Մ. Սարգսի «Ե խոշոր բջջային լիմֆոմա», Ս. Վլասյանի՝ «Քրոնիկ քարային խոլեցիստիտ՝ սրացման շրջանում», Զ. Գապարյանի՝ «Միզապարկի անցումաբջջային քաղցկեղ, մակրոհեմատուրիա՝ զուգակցված երկրորդային շաքարախտի հետ» զեկուցումները:

Ժոթյունը հետաքրքրություն առաջացրեց ներկաների մոտ:

Կոնֆերանսն անցավ աշխույժ քննարկման մթնոլորտում, զեկուցողները եւ նրանց ղեկավարները պարզաբանեցին ունկնդիրների կողմից առաջադրված հարցերը:

ՀԱՍՄԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
 հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետ



«Երիտասարդների երիտասարդների համար» համատեղ նախագիծը երևանյան 8 բուհերում

Տարիների հետ փոխվում է մարդը, փոխվում են նրա խառնվածքն ու ճաշակը, ավելին՝ հաճախ տարիներին զուգընթաց անձի էության մեջ նոր ընկալումներ ու զգացողություններ կարող են բացահայտվել կամ հին ապրում-զգացողությունները հեռացած թվալ ու երբեմն վերադառնալ՝ իբրև վերապրում: Ժամանակը կարող է հարկադրել հոգեվիճակներ, որոնք փոփոխվում են հայտնի կամ անհայտ պատճառներով, ստեղծել տրամադրություններ, որոնք պահանջ ունեն վեհի, բարձրի, զեղեցիկի ու համամարդկային այլ արժեքների հետ անմիջական շփման: Նման պահերին մարդ արարածը, անկախ տարիքից և մասնագիտությունից, անկախ իր կամքից՝ ցանկանում է առնչվել արվեստին, հատկապես երաժշտությանը՝ նրա բազմազան դրսևորումներով, քանի որ երաժշտությունը, որի բնույթին չզիտես ինչ խորհրդավորությամբ հատուկ է հուզական ազդեցությունն անենից առաջ, սովորաբար ավելի անմիջականորեն է ներգործում, քան մյուս արվեստները: Քանի որ այն առաջին իսկ հնչյուններից սկսած՝ մտքին հասնելուց առաջ թափանցում են մարդու հուզաշխարհը և ստիպում հուզվել:

Եվ եթե բաց է հոգիդ և տրամադիր, ավելին՝ պահանջ ունի ընկալելու այն հրաշքի ներգործությունը, որ երաժշտությունն անուն ունի՝ հանդիպումը կկայանա: Ինչպես այն տեղի ունեցավ օրերս՝ ուսանողական խորհրդարանի 20-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում Երևանի պետական բժշկական համալսարանի մեծ հանդիսասրահում կայացած համերգի ժամանակ:



Միջոցառման հյուրը Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբն էր (զեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյան), կազմակերպիչը՝ ԱՄՆ դեսպանատունը, որը, ինչպես միջոցառման բացման խոսքում նշեց ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար Քերին Ի. Ռոբլին՝ փոխանցելով Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Ա. Հաֆերնի հղումը, նպատակ ունի ներկայացնել ժողովրդականություն վայելող ամերիկյան մշակույթի ընտրանին՝ հոլիվուդյան կինոերաժշտության այն նմուշները, որոնք ոչ միայն չափազանց հանրաճանաչ են, այլև համարվում են «Ամերիկայի ծայնապնակի» լիիրավ բաղադրիչը: Ի դեպ՝ Հայաստանի համալսարաններում կայացող այս փառատոնը դեսպանատունը նվիրել է Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանատան բացման 20-ամյակին:

Ծրագրում ընդգրկված ստեղծագործությունները չափազանց ջերմորեն ընդունվեցին և երիտասարդների, և առավել տարիքավոր ունկնդիրների կողմից: Հատկապես վերջիններիս համար այդ հանրահայտ գործերը դեպի երիտասարդ տարիները վերադառնալու կամուրջ դարձան, երբ ամերիկյան կինոն նոր-նոր թափանցել էր ԽՍՀՄ տարածք, իսկ կինոերաժշտությունը դարձել սիրելի ու հոգեհարազատ: Համերգը հաղորդավար չունեի, հազիվ սկսում էր հնչել ծանոթ երաժշտությունը՝ դահլիճը արձագանքում էր ջերմ ծափողջյուններով...

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

Hollywood Non-Stop: Youth Orchestra performs best of American movie soundtracks for students in Yerevan

The State Youth Orchestra of Armenia (SYOA) is due to hold concerts at eight universities of Armenia March 15-27 as part of a joint music initiative with the United States Embassy in Yerevan. The "Youth for Youth" concerts celebrate the 20th anniversary of U.S.-Armenian diplomatic relations. According to the information on the US Embassy's website, the SYOA, under the leadership of Artistic Director and Principal Conductor Sergey Smbatyan, presents

the "Hollywood Non-Stop" program, including well-known music from "Gladiator", "Braveheart," "West Side Story," "Pirates of the Caribbean" and other classic Hollywood soundtracks. The program also includes pieces by famous American composers such as George Gershwin, Leonard Bernstein, and John Williams. This initiative brings the richness of American film scores to Armenian youth audiences.



«Ապագա բժիշկը» միշտ ունեցել է իր ուսանող-թղթակիցները: Հներն ավարտել են, գնացել, եկել են նորերը, և այդպես տարիներ շարունակ: Առավել ակտիվներից շատերը այսօր ճանաչված մասնագետներ են, գիտնականներ, պաշտոնյաներ: Թերթին թղթակցելը, հետաքրքիր հոդվածներով հանդես գալը նրանց ակտիվ կենսագրության դրսևորումն էին, որն էլ եկավ ապացուցելու, որ նման մարդիկ ակտիվ են նաև աշխատանքային գործունեության բնագավառում:

Սերունդների հերթափոխը շարունակվում է: Մեր նոր արտահաստիքային թղթակիցը ներկայանում է ընթերցողին միանգամից 2 հոդվածով:

Գյավազ Սլոյանը ընդհանուր բժշկության ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողուհի է: Նույն կուրսում է սովորում նաև նրա ավագ քույրը՝ Արմինեն:

Ցավալի է, բայց՝ փաստ: Գյավազը չցանկացավ իր լուսանկարը տեղադրել թերթում: Հարգելով ազգային փոքրամասնության ներկայացուցչի ցանկությունը՝ նշեմ, որ լուսանկարը հնարավորություն կտար համոզվելու, որ գեղեցկադեմ այդ աղջիկը ամենաներկարամազն է ոչ միայն համալսարանում, այլ գուցե նաև հանրապետությունում:

Ա.Թ.

ԱՊՐԻԼԻ 1-Ը ՈՉ ԹԵ ԽԱԲԵԼՈՒ, ԱՅԼ ԿԱՏԱԿԵԼՈՒ ՕՐ

Բոլորս էլ հիշում ենք կրտսեր դասարաններում մեր ապրիլմեկյան կատակները:

Անհամբեր արթնանում էինք այդ օրը ու սկսում կատակել մեր ընտանիքի անդամների, ընկերների հետ, բայց եկեք խոստովանենք, որ՝ չգիտես ինչու, բոլորիս ամենացանկալի թիրախը այդ օրը ուսուցիչներն էին: Հիշու՞մ եք՝ ինչ թակարդներ էինք լարում. կավիճի փոխարեն շաքար էինք դնում կամ ջնջողը դնում էինք դռան վերևի մասում, որ, երբ դուռը բացվի՝ ջնջողը վայր ընկնի ու էլի նման հիմար կատակներ:

Չեմ հավատա՞ եթե մեկն ասի, որ իրենց դասարանում նման բան չի եղել: Ինչևէ՞ ինչ եղել եղել է, անցածը հետ չես բերի, մանավանդ, որ այդ ամենը այն ժամանակ իսկապես շատ ծիծաղելի էր, բայց հիմա մենք ոչ թե վեցերորդ դասարանի երեխաներ ենք, այլ հասուն մարդիկ և համաձայնեք, որ ապրիլի մեկին դասախոսի գլխին խաղ խաղալը՝ ասենք ամբողջ խմբով դասի չզալը, ոչ թե ծիծաղելի է, այլ ծանծրալի և մի քիչ էլ աղետալի:

Այն էլ ասեմ, որ այս տարի ապրիլի մեկը կիրակի էր ու այդ կատակը չէր էլ անցնի:

Ապրիլի մեկը ոչ թե խաբելու, այլ կատակելու օր է: Կհարցնեք, թե ո՞րն է տարբերությունը: Ասեմ: Խաբում ենք նրանց, ում չենք վստահում ու համակրում, իսկ կատակում ենք նրանց հետ, ում սիրում ենք և ուզում ենք, որ մեր կատակը ժպիտ պարզվի:

ԱՊՐԻԼԻ 7՝ ՄԱՅՐԵՐԻ ՏՈՆ

Օրացույցի տոնական այս էջը բացելով, անմիջապես յուրաքանչյուրիս մոտ հարց է առաջանում.

«Ի՞նչ նվիրեմ մայրիկիս», իսկ պատասխանն արդիական է բոլոր ժամանակներում: Կարևորը ոչ թե նվերն է, այլ սերը, որ դնում ենք դրա մեջ նվիրելիս:

Սա համոզիչ ու սպառիչ պատասխան է, բայց խոստովանենք, որ երբ մայրիկին նվեր գնելու պահն է գալիս, մենք ավելի շատ ենք շրջում առևտրի կենտրոններում: Փորձում ենք հարմար մի բան գտնել, որը և պիտանի, և արժեքավոր լինի: Իսկ ինչու է այդքան դժվար մայրիկի համար նվեր ընտրելը, որովհետև մայրը նվիրել է մեզ ամենաթանկ բանը այս աշխարհում՝ մեր կյանքը: Երանի բոլորս Շիրազի տաղանդը ունենայինք, որպեսզի այնքան գեղեցիկ նկարագրեինք մեր սերը մեր մայրերի հանդեպ: Երանի այնքան ուժ ունենայինք, որ կարողանայինք աստղեր նվիրել մեր մայրիկներին, կամ մեր

սիրտը հանեինք ու նվիրեինք նրանց, որ տեսնեին մեր մեծ սերը իրենց համդեպ:

Բայց կարծում եմ դրա կարիքը չունի ոչ մի մայր, որովհետև մեր որդիական սերը չնչին է նրանց անսահման մայրական սիրո համեմատ: Որովհետև մայրական սերը անաղարտ է ու անսահման, որովհետև այն քերմ է ու կենսատու, իսկ բոլոր մայրերը նման են իրար՝ աչքերի նույն արտահայտությունը, նույն ժպիտը, երբ նայում են իրենց զավակներին:

Սկսեցինք փիլիսոփայել ու մոռացանք՝ այնուամենայնիվ ի՞նչ նվիրել մայրիկին այդ օրը:

Առաջարկում եմ մի քերմ ու ամուր համբույր նվիրել մեր մայրերին, որովհետև ինչ էլ նվիրենք, որքան էլ թանկարժեք ու ճիշտ լինի մեր նվերը, միևնույնն է, նա կժպտա ու կասի.

- Իմ ամենամեծ նվերը դու ես, զավակս:

Գ. ՍԼՈՅԱՆ



Երկիր մոլորակի համաշխարհային օր, երկիր մոլորակի ժամ...




Օրը նպատակաուղղված է միավորելու ամբողջ աշխարհի մարդկությանը՝ շրջակա միջավայրի պաշտպանության գործում: ԱՅԿ-ի հովանու ներքո անցկացվող երկրի համաշխարհային օրը ոչ միայն մեծ, այլև իրապես համաշխարհային տոն է, և հնարավորություն է տալիս երկիր մոլորակի ցանկացած բնակիչի արտահայտելու իր երախտագիտությունը մեր մեծ ընդհանուր տանը: Այդ օրը բոլոր ցանկացողներն ավանդույթի համաձայն զբաղված են իրենց բակերի և փողոցների բարեկարգման աշխատանքներով, մասնակցում են տարբեր բնապահպանական միջոցառումների:

Երկիր մոլորակի ժամը համեմատաբար նորույթ է: Մեկ ժամով խավարի մեջ են ընկղմվում նշանավոր երկնաքերները, ճարտարապետական հսկա կոթողները, աշխարհի խոշորագույն հրապարակներն ու բնակավայրերը: Երևույթը սիմվոլիկ բնույթ է կրում: Իմաստն այն չէ, որ լույսերը մեկ ժամ անջատելով լուծվում են շրջակա միջավայրի պահպանության հարցեր: Միջոցառման զխավոր նպատակը, թերևս, այն է, որ համոզվում ենք ձևավորվի, որ ցան-

կության դեպքում մարդկությունը կարողանում է միավորվել մեկ գաղափարի շուրջ: Այս ակցիային միացողները՝ կատարելով առաջին քայլը, իրենց վրա պարտականություն են վերցնում կատարել նաև 2-րդ, 3-րդ և հաջորդ բոլոր քայլերը, հանուն մեր մոլորակի պահպանության, մաքրության, անվտանգության:

Երևանը նույնպես այդ նախաձեռնության արդյունքում մեկ ժամ անջատեց բավականին լույսեր, շատ բնակարանների պատուհանագոգերին թրթռում էին մոմի բեկբեկուն լույսերը: Սա շատ լավ է: Բայց մեզանից յուրաքանչյուրը նաև ամեն օր պետք է մտածի ոչ միայն Երկիր մոլորակի, այլև մեր տան՝ մեր փոքրիկ երկրի մասին, որն այնքան քիչ ռեսուրսներ ունի... Մեր տներում ավելորդ լույսեր չենք վառում, մեր տներում ամեն օր «իրականացնում ենք» երկրի ժամը՝ խնայում, տնտեսում... Իսկ աշխատավայրում: Որքանով ենք մտահոգ ավելորդ վառվող լույսերով: Առավոտ վաղ կան օրվա ամպամած պահին վառված լույսը օրվա առավել լուսավոր ժամին կամ ամպամածությունն անցնելուց հետո ե՞րբ ենք հանգցնում...

ՄԵՐԱ ԹՈՐՈՍՅԱԼ



Շարունակվող խորագիր

Արմատացող լեզվական սխալներ

Լեզվի մաքրության պահպանման ամենախոսուն օրինակը անգլերենի օրինակն է:

Մեփական լեզի, նրա քերականական օրենքների ու կանոնների, բառապաշարի նկատմամբ խիստ հետևողական վերաբերմունքի արդյունքում, անգլիացիները՝ բրիտանացիները պահպանել են մաքուր ու հրաշալի դասական անգլերենը՝ Բայրոնի ու Շեքսպիրի լեզուն:

Նույն լեզվի նկատմամբ անփույթ ու անտարբեր վերաբերմունքը հասցրել է լեզվի ձևախեղման, այլանդակման այնպիսի դրսևորման, ինչպիսին ամերիկյան անգլերենն է, լեզու, որը չափազանց հեռու է բրիտանական անգլերենից:

Ֆրանսիացիներն ավելի առաջ են գնացել: Նրանք պարբերաբար հրատարակում են տեղեկագրեր, որոնք զգուշացնում են արմատացող լեզվական սխալների մասին, ստիպում կետրոնացնել ուշադրությունը այդ բառաձևերի վրա և պահանջում անպայման ուշադրության արժանացնել նման փաստերը:

Ամեն անգամ այս թեման շոշափելիս սրտի ցավ եմ զգում, քանզի եթե անգամ որոշ սխալներ երբեմն կարծես շտկվում են՝ ընդհանուր միտումը լեզվի ավելի աղավաղմանն է տանում:

Պատճառները շատ են, դրանց վերլուծությունը՝ դուրս մեր այսօրվա ծրագրից: Խոսքը բարբառային ձևերի օգտագործմանը և օտարաբանություններին չի վերաբերում: Այս անգամ մեր խոսքը կվերաբերի արմատացող լեզվական մեկ սխալի, որը դարձել է այնքան սովորական, որ այն կիրառողները կասկած անգամ չունեն, որ այլասերում են մեր լեզվամտածողությունը:

Ստորև փորձենք ներկայացնել մեր լեզվում արմատացող սխալներից մեկը, որն ահավոր պնդեթեսությամբ մուտք է գործել ոչ միայն երիտասարդության, այլև մտավորականների, իսկ որ ավելի սարսափելի է՝ մամուլի, հեռուստատեսության, թատրոնի, կինոսցենարի բառապաշար:

Ոչ թե՛ կպնել, թռնել, փախնել, այլ՝ կպՉել, թռՉել, փախՉել

Այս անգամ խոսենք **կպչել, թռչել, փախչել**... բառերի մեջ գործածվող դժբախտ «չ»-ի մասին: Նշված բառերում չ-ն կուլ են տալիս ոչ միայն հայերենին վատ տիրապետողները, այլև լրագրողները, հայերենի մաքրության մասին հաղորդաշարեր ներկայացնող հեռուստաընկերության հաղորդավարները, ավելին՝ հայոց լեզուն մանուկներին սովորեցնող «Մեր այբբենարանը» ծայրերիցի հեղինակները, որոնք օգտագործում են **կպնել, թռնել, փախնել** ձևերը՝ չ-ի փոխարեն օգտագործելով մ տառը:

Ուրեմն՝ ոչ թե՛ կպնել, թռնել, փախնել, այլ՝ **կպչել, թռչել, փախչել**:



Ծիծաղով մարդը փարբերվում է կենդանուց

«Խեղկատակների մուտքը քաղաք նրա բնակիչների առողջության համար շատ ավելին արժեք է, քան տասնյակ դեղորայքով բեռնված ջորիների մուտքը»,- գրել է բժիշկ Սուդենգենը դեռևս XVII դարում: Ծիծաղը վերացնում է հոգնածությունը: Ծիծաղի դեպքում մարզվում են բոլոր մկանները, և արյունը արագ հարստանում է թթվածնով: «3 րոպեանոց ծիծաղը փոխարինում է 15 րոպեանոց մարմնամարզությանը»,- գրել է գիտնական Կարլ Ռոդարը:

Ծիծաղը, ինչպես պարզվում է, շատ լուրջ առողջական և սոցիալական երևույթ է, որի մասին ստեղծված է նույնիսկ հատուկ գիտություն՝ գելոտոլոգիա: Այն հաստատում է՝ ծիծաղել պետք է ոչ միայն նրա համար, որ ամեն ինչ լավ է և զվարճալի, այլ՝ որ ամեն ինչ լինի լավ ու զվարճալի: Այլ կերպ ասած, որքան շատ ծիծաղում է մարդը, այնքան նա առողջ է ու երջանիկ:

Ծիծաղի բուժիչ հատկությունների առավել ընդգրկուն ուսումնասիրությամբ գիտնականները սկսել են զբաղվել 60-ականների կեսերից: Ամերիկացի նյարդաբան Ուիլյամ Ֆրայը առաջինն է հայտնաբերել, որ ծիծաղը ամրացնում է օրգանիզմի իմունիտետը, նվազեցնում է սթրեսային հորմոնների արտադրությունը և արյան մեջ ավելացնում է երջանկության հորմոնի՝ էնդորֆինի քանակը:

Իմիջիայլոց՝ ծիծաղը կարելի է դիտարկել նաև որպես սպեցիֆիկ մեքսուս՝ նպաստող մկանների ավելի քան 80 խմբի թուլացմանը: Ծիծաղը ամրացնում է նաև սիրտը և նույնիսկ ընդունակ է իջեցնել ճնշումը հիպերտոնիկների մոտ: Հետազոտությունները ցույց են տվել, որ ծիծաղելը օգտակար է նաև նրանց, ովքեր տարել են ինսուլտ: Ծիծաղելիս դեմքի մկաններից հատուկ իմպուլսներ են ուղղվում դեպի ուղեղը, ինչը և բարենպաստ ազդեցություն է ունենում կենտրոնական և ընդհանրապես ողջ նյարդային համակարգի վրա:

Բժիշկները կոչ են անում հաճախ ծիծաղել: Այն, որ ծիծաղն ու ժպիտը օգտակար են մարդու օրգանիզմին, հայտնի է դեռ Հիպոկրատի օրերից: Լավատեսները միշտ ապրել են երկար: Իսկ ծիծաղը նույն ժամանակ նաև ֆիզիոլոգիական երևույթ է: ԱՄՆ-ում գիտնականների անցկացրած հետազոտությունները ապացուցել են, որ ծիծաղի թերապիան ի գործ է մարդուն դուրս հանել դեպրեսիայից՝ առանց որևէ հակադեպրեսանտ կիրառելու:



Ծիծաղը նպաստում է առողջությանը

Քեզ ճնշված ես գգում: Ուղղակի ժպտա և վատ տրամադրությունը կկորչի: Մի ամաչիր լիաթոք ծիծաղել և շուտով կնկատես, թե ինչպես է փոխվում քո կյանքն ու առողջությունը: Ծիծաղը ոչ միայն օգտակար է տրամադրությունը բարձրացնելու, այլև առողջության համար: Մարդիկ, որոնք սիրում են ծիծաղել, քիչ են հիվանդանում, հազվադեպ են ջղաձգվում և չգիտեն, թե ինչ բան է դեպրեսիան:

Ծիծաղը հանգստացնում է

Ծիծաղը ակտիվացնում է էնդորֆիններին: Դրանք երջանկության հորմոններն են, որոնք օգնում են ազատվել ջղաձգումից ու հուզմունքից: Բրիտանական հոգեբանները ապացուցել են, որ կոմեդիկ բնույթի ֆիլմի դիտումից հետո մարդու ներվային համակարգի ջղաձգության մակարդակը իջնում է մի քանի անգամ: Ավելին. միտքն այն մասին, որ երկու օր հետո մարդը դիտելու է նմանատիպ ֆիլմ փոխում է նրա հոգեվիճակը:



Ծիծաղն ամրասնդում է հարաբերությունները

Միասին ծիծաղելու ունակությունը չափազանց կարևոր է լավ ու բարի հարաբերությունների ստեղծման համար: Երկու մարդու պատկերացումն այն մասին, թե ինչը կարող է ծիծաղելի լինել, ավելի է մտերմացնում նրանց ու թույլ է տալիս ավելի ազատ լինել միմյանց հետ շփման մեջ: Եթե դու կատակում ես, ուրեմն չես վախենում ծիծաղելի երևալ: Հետևաբար վստահում ես:

Ծիծաղը դրական ազդեցություն է ունենում մարդու մաշկի վրա

Եթե դու հաճախ ես ծիծաղում, ապա կարող ես մոռանալ թանկարժեք բուժիչ-կոսմետիկ միջոցների մասին, որոնք նախատեսված են մաշկի լավացման համար:





The Guardian-ը հրապարակել է աշխարհի լավագույն 100 համալսարանների ցուցակը՝ ըստ QS World University Rankings-ի: Առաջին հորիզոնականում Բրիտանական հեղինակավոր Քեմբրիջի համալսարանն է, երկրորդ և երրորդ հորիզոնականներում ամերիկյան Չարվարդն ու Յեյլի համալսարաններն են:

Քեմբրիջի համալսարանը՝ Օքսֆորդից հետո Մեծ Բրիտանիայի երկրորդ ամենահին համալսարանը, ութ հարյուր տարեկան է, որը նշելուն նվիրված տոնական միջոցառումները կատարվել են մեծ հանդիսություններով:

Տոնակատարության առիթով կազմակերպվել է հատուկ շոու՝ նվիրված Քեմբրիջի պատմությանն ու համալսարանի հայտնի շրջանավարտներին, որոնց շարքում են Իսահակ Նյուտոնը, Չարլզ Դարվինը, Ֆրենսիս Բեկոնը, Էռնեստ Ռազենֆորդը և այլոք:

Միևնույն ժամանակ քաղաքի կենտրոնում գտնվող չորս եկեղեցիների զանգակատներից հնչել է դոլանջ՝ հատուկ այդ տոնական միջոցառման համար գրված երաժշտությամբ: Մեղեդու հեղինակը Քեմբրիջի շրջանավարտ, կոմպոզիտոր Ֆիլ Իրիսն (Phil Earis) է:

Շատ հետաքրքիր է Քեմբրիջի համալսարանի ստեղծ-

ման պատմությունը: Համալսարանը հիմնադրվել է Քեմբրիջ քաղաքի այն մտավորականների կողմից, ովքեր լքել էին Օքսֆորդ քաղաքը և Օքսֆորդի համալսարանն այն պատճառով, որ օքսֆորդյան ուսանող դաժանաբար սպանել էր քաղաքի մի բնակչուհու: Բացի այդ՝ Օքսֆորդի երկու գիտնականներ մեղավոր էին ճանաչվել մի կնոջ սպանության մեջ և կախաղան հանվել քաղաքային իշխանության կողմից՝ թագավորի համաձայնությամբ: Ի նշան բողոքի՝ համալսարանի ղեկավարությունը հոժարական դադարեցրեց համալսարանի գիտական գործունեությունը, և գիտնականները ցրվեցին այլ գիտական հաստատություններ, այդ թվում՝ Քեմբրիջում գոյություն ունեցող դպրոցը:

Քեմբրիջի ամենահայտնի կառույցը Թագավորական քոլեջի տաճարն է, որը կառուցվել է 100 տարի:

Քեմբրիջի շրջանավարտներից 83-ը նոբելյան մրցանակակիրներ են: Այս ցուցանիշով աշխարհում այն հավասարը չունի:

Ի դեպ՝ նոբելյան 23 մրցանակները տրվել են բժշկության բնագավառի առնչությամբ:

Ա.Թ.

Քեմբրիջը տազնապատ է. թեստային համակարգի պատճառով ուսանողները դադարել են մտածել և վերածվել են ռոբոտների

Թեստերի միջոցով կրթություն ստացած ուսանողները որևէ նոր գաղափար չեն կարողանում առաջ քաշել: Նման եզրահանգման են եկել Քեմբրիջի համալսարանի դասախոսները՝ ելնելով իրենց բազմամյա փորձից:

Պատմության պրոֆեսորներ Ռեբերտ Թոմբսը և Դեվիդ Աբուլաֆիան կարծում են, որ բազմաթիվ տարիների ընթացքում ուսանողները դադարել են մտածել ոչ ստանդարտ ձևով և այլևս չեն արտահայտում սեփական գաղափարներ: Ավելին, այն սխալները, որոնք հիմա անում են գերազանցիկները, նախկինում միայն թույլ ուսանողների «մենաշնորհն» էր: «Ուսանողները որոշակի արդյունքի վրա են կենտրոնանում, նրանք ուղղակի մտածելու կարիք չունեն», -կարծում են պրոֆեսորները:

Լոնդոնի հռետորական դպրոցի նախկին տնօրեն և կառավարության խորհրդական Ջոն Մակկինտոշը կարծում է, որ դրա մեղավորը կրթության թեստային համակարգն է: Այն ուսուցիչներին և ուսանողներին բառացի «ռոբոտների» է վերածել: Նրա խոսքով՝ Քեմբրիջում ուսանողները մույնիսկ չգիտեն, թե ինչպես շարադրություն գրել, բայց կարող են ցանկացած թեստ անսխալ անցնել, որը նրանց կրթված մարդ չի դարձնում:

«Ջերի Ջարվիսը, ով չորս տարի ղխավորել է Մեծ Բրիտանիայում խոշորագույն քննական կենտրոն Edexcel-ը, կոչ է արել արմատական վերափոխում կատարել որակավորման համակարգում», - գրում է Telegraph-ը:

FOR YOU FOREIGN STUDENTS!





GET ACQUAINTED WITH THE

GEGHART

The Geghard Monastery complex is a medieval structure, where the main church, Katoghike, was built in 1215. A relief carving of a lion trampling a bull, a symbol of authority, is in relief carved above the entrance of the church.

Two rivers, the Azad and the Karni, flow through the cave floor of Geghard. The architectural jewel, Geghard arises out of the center of the cave. According to 4th century historians, the cave was named Ayrivank. An inscription carved above the entrance of St. Gregory's Church within the monastery, which was built in the 12th century, chronicles this same fact.

An Armenian sculptor by the name of Galdzak carved two entire churches from an enormous cliff. The monastery was originally called Ayrivank, but in the same century, the monastery was given the honor of guarding the Geghard. The Geghard was the spearhead used to wound Christ upon the cross by the Roman soldier and was considered sacred. Hence the monastery took its new name from the spearhead.

According to tradition, the great conqueror Tamerlane, reached Geghard Monastery after triumphing over half of the world. Tamerlane was informed that the seven most precious diamonds in Armenia were kept there. The conqueror decides that he would capture these diamonds himself. He peaked through one of the crevices of the carved cliff. A glimmering light appeared inside the dark church. Entering the church, he reached for the glimmering light but the light disappeared immediately. He returned to the entrance and the light started to twinkle again. He tried over and over to take the diamonds, but in vain. Tamerlane snickered and said that man must only see and pass the diamond glimmering church of the Armenians. From then on, foreigners called the church the Church to See and Pass.

But what was that glimmering light? The architect sculptor had placed a moving stone within the walls of the church, which would open a crack and let in a ray of light at noon. The ray of light gave the effect of twinkling diamonds within the dark church.



COUNTRY WHERE YOU STUDY!

GARNI

The Garni architectural complex (3rd century BC) was once a mighty fortress which stood on a rocky, triangular plateau rising steeply for the river Azat. The Armenian kings had been summering in Garni to escape the heat of the Ararat valley. The mighty basalt walls testify to the power of the lords guarded, but even they were powerless in the face of treachery. The victim was King Mithridates who died at the hands of his nephew. Though he had the support of the Roman Empire, the traitor did not reign long, and was overthrown with the aid of Parthia, the rival of the Roman Empire, and the throne went to Tiridates.

Tiridates started building a beautiful pagan temple - the Sun Temple - on the territory of Garni Fortress (1st century AD). The temple graced the hillside for 17 centuries, evoking wonder and delight with its perfect form and ethereal beauty until a major earthquake destroyed it in 1679. Almost three centuries were to pass before the prominent Russian orientalist Nikolai Marr and his colleague Yakov Smirnov discovered the ruins of the Sun Temple. In the 1930s Professor Nikolai Buniatov made a faithful reconstruction of the temple after a thorough study of the ruins. Restoration work was launched in 1966 and took ten years of hard work to complete.

Now let us take a look at the temple. The raise of the temple has leaves twined around lion masks which are so naturally rounded, that it is hard to believe they are carved in stone and not molded. The small square hall with the altar is surrounded by 24 columns with finely carved capitals. An extensively ornamented roof tops this "temple of coolness", which was used as the summer residence of the kings of Armenia after the country was converted to Christianity.

The ruins of the huge palace and baths, built in the 3rd century in the Roman style, are very interesting. The baths were warmed by heated air which passed through ceramic pipes laid under the floor. There is an inscription in Greek which never fails to mystify visitors. It says: "We worked without remuneration".

Archeologists are still working on the Garni complex. They have discovered many interesting household items, fragments of antique marble statues, inscriptions in Armenian, Aramaic, and Greek.



Համոզված եմ՝ աշխարհում չկա մի երկիր, որտեղ նման հետևողականությամբ հարգեն իրենց զոհերի հիշատակը: Վստահ եմ, որ Հայոց եղեռնի չսպիացող ցավը տարեցտարի ավելի կբարձրացնի այն ծաղկեպատը, որը գոյանում է զոհերի հիշատակին վառվող անմար կրակի շուրջ: Այդ օրվա երթը և ծաղկադրումը սրբագործում է մեր հոգին՝ մեր ժողովրդին դարձնելով առավել միասնական: Սակայն, չափազանց կարևոր է նաև, որ երկյուղածությամբ ու խոնարհումով դրված ծաղիկները մեկ-երկու օր անց աղբի չեն վերածվում: Չորացած ծաղկաթերթիկներից ստացած թուղթը դառնում է բացիկ, շնորհակալագիր ու երախտագիտական նամակ՝ խրախուսելու նրանց, ովքեր զգում են մեր ցավը: Իսկ ծաղկացողունները հատուկ մշակմամբ վերածվում են պարարտանյութի և օգտագործվում տարածքում աճող հիշատակի ծառուղու եղևնիների սնուցման համար:

